2013թ.-ի Երևանի ավագանու ընտրարշավի լուսաբանումը առցանց ԶԼՄ-ներում

Մշտադիտարկման արդյունքների զեկույց

2013Թ. ԱՊՐԻԼԻ 7 - ՄԱՅԻՍԻ 3

Սույն փաստաթղթի հրատարակումը հնարավոր է դարձել Քաունթերփարթ Ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Կովկասյան ինստիտուտի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնին և Կովկասյան ինստիտուտին, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Բովանդակություն

Նպատակները 3
Մեթոդաբանությունը 3
Ընտրարշավը 8
Ընտրությունների տարին 8
Մասնակցող կուսակցությունները 10
Կուսակցություններ 18
Վերաբերմունքներ 18
Ընտրություններ. քաղաքական, թե՞ ապաքաղաքական 18
Իշխող կուսակցության «քաղաքական մենաշնորհը» 21
Գաղափարախոսական ճգնաժամ 23
Մեղավորը ՀՀԿ-ն է 25
Ընդդիմությունը 28
Արժեքներ 33
Հավասարաչափ զարգացում 34
Քաղաքի իմիջը 35
Ենթակառուցվածքներ 37
«Բնիկ երևանցի» 38
Արդար ընտրություններ 40
ԶԼՄ-ները 41
Առաջարկություններ 47
Առաջարկություններ քաղաքական կուսակցություններին 49
Առաջարկություններ ԶԼՄ-ներին 50

Նպատակները

Ուսումնասիրության նպատակն էր. գնահատել առցանց լրատվամիջոցների ազդեցությունը ընտրողների ընկալումների և իրազեկության վրա՝ Հայաստանում տեղի ունեցող ընտրական գործընթացների ժամանակ և մասնավորապես՝ պարզել, թե առցանց ԶԼՄ-ների կողմից Երևանի ավագանու ընտրարշավի լուսաբանումը թույլ տվե՞ց արդյոք ընտրողներին իրենց ընտրությունը կատարել իրազեկվածության պայմաններում: Այս նպատակին հասնելու համար մշտադիտարկման է ենթարկվել ավագանու ընտրարշավի լուսաբանումը առցանց լրատվամիջոցներում:

Ընտրարշավի ընթացքում առցանց ընտրողների ստացած տեղեկությունները ԶԼՄ-ներից իրականում երկու տեսակի դերակատարների միջև փոխազդեցության արդյունք էին, որտեղ մի կողմից՝ ընտրություններին մասնակցող ***քաղաքական կուսակցություններն*** էին, իսկ մյուս կողմից՝ առցանց ԶԼՄ-ների ***լրագրողներն ու խմբագրությունները***: Ընտրություն կատարելիս ընտրողները պետք է հենվեին այն տեղեկատվության վրա, որը ձևավորվում էր՝ ամբողջացնելով ընտրարշավի ընթացքում կուսակցությունների ասածները, արարքները և լրագրողների կողմից այդ ընտրարշավի ընկալման, մեկնաբանման և ներկայացման ձևերը: Հետևապես, ուսումնասիրության առարկան այն էր, թե ինչպես էին կուսակցությունները վարում իրենց քարոզարշավները ***և*** թե ինչպես էին ԶԼՄ-ները լուսաբանում դրանք: Սույն զեկույցում տեղ են գտել կուսակցություններին և լրատվամիջոցներին նվիրված բաժիններ, ինչպես նաև նրանց ուղղված առաջարկությունների առանձին փաթեթներ:

Մեթոդաբանությունը

Կիրառվել է դիսկուրսի վերլուծության վրա հիմնված որակական մեթոդաբանություն: Առցանց ԶԼՄ-ների ընտրանքը կազմավորվել է՝ որպես հիմք ընդունելով լրատվամիջոցների վայելած ժողովրդականությունը համացանցի հայաստանյան օգտատերերի շրջանում: Որպես ժողովրդականության չափանիշ կիրառվել են *www.circle.am* համացանցային կայքի տվյալները: Կայքը հաշվարկում է հայկական վեբ–ռեսուրսների վարկանիշը՝ հիմնվելով անհատական IP ունեցող այցելուների թվաքանակի վրա: Հետաքրքրության առարկա էին հանդիսանում միայն *.am* դոմեններից կատարվող այցելությունները, այսինքն՝ հայաստանցի ընթերցողները, քանի որ այս ընտրություններում միայն ՀՀ քաղաքացիները ունեին

ընտրելու իրավունք և հետևապես, աշխարհի այլ մասերից կատարվող այցելություններ հաշվի առնելը կխեղաթյուրեր ընտրանքը:

Circle.am-ի տվյալները խաչաձև ստուգման են ենթարկվել *www.alexa.com*-ի տվյալների հետ: Վերջինս միջազգային համացանցային կայք է, որը վիճակագրական տվյալներ է հավաքում բոլոր երկրների համար: Նման կրկնակի ստուգումը անհրաժեշտություն էր, քանի որ երբեմն այս երկու կայքերի տվյալները չեն համընկնում (կան չհաստատված տեղեկություններ, որ *circle.am*-ի վիճակագրությունը հնարավոր է նենգափոխել): Սակայն տվյալ դեպքում երկու կայքերը տվեցին նույն արդյունքը:

Ըստ *circle.am*-ի և *alexa.com*-ի, 2013թ.-ի ապրիլի 7-ի դրությամբ (որը ընտրական քարոզարշավի մեկնարկի օրն էր) **հայկական առցանց լրատվամիջոցներից** ամենամեծաքանակ այցելուները ունեին հետևյալները.

1. *News.am*
2. *1in.am*
3. *Tert.am*
4. *Slaq.am*
5. *Asekose.am*

Սկզբնապես վարկանիշային աղյուսակում ընդգրկվել էին նաև *Blognews.am* և *MediaMall.am* կայքերը, որոնք բարձր տեղեր էին գրավում (համապատասխանաբար՝ երկրորդ և չորրորդ): Սակայն մշտադիտարկման սկզբնական երկու օրերի ընթացքում իրականացված փորձարկումից հետո այս կայքերը հանվեցին ընտրանքից: Փորձարկումը ապացուցեց, որ այս կայքերը ոչ թե լրատվամիջոցներ են, այլ՝ հավաքող-վերահրապարակողներ: Այսինքն, նրանք հավաքում ու վերահրապարակում են այլ լրատվամիջոցների կողմից լույս ընծայված նյութերը և սեփական լրագրողական գործունեություն չեն իրականացնում:

Ընտրանքի կազմավորումը և փորձարկումը ավարտելուց հետո հետազոտական խումբը սկսեց իրական մշտադիտարկումը: Մշտադիտարկումը իրականացնելիս հետազոտողները կարդացել են ընտրարշավի ողջ ընթացքում, այսինքն՝ ապրիլի 7-ից մայիսի 3-ը ընկած ժամանակահատվածում, նշված հինգ կայքերում տեղադրվող բոլոր նյութերը: Եթե որևէ հրապարակման մեջ հիշատակված էր լինում քաղաքի ավագանու ընտրությունների, ընտրապայքարի կամ ընտրություններում ներգրավված սուբյեկտի (կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակներում ընդգրկված անձի) մասին, ապա վերլուծաբանը որոշում էր, թե.

- արդյոք կուսակցության/թեկնածուի նկատմամբ *վերաբերմունք* կամ *կարծիք* է արտահայտվել որևէ գործող անձի (լրագրողի, քաղաքական գործչի և այլն) կողմից,
- արդյոք կուսակցության/թեկնածուի կողմից սեփական *արժեքների* վերաբերյալ որևէ միտք է արտահայտվել:

Եթե նման վերաբերմունք/կարծիք կամ արժեքների մասին միտք չի գտնվել, ապա վերլուծաբանը շարունակել է կարդալ: Իսկ եթե գտնվել է, ապա վերլուծաբանը կատարել է գրառում՝ ըստ հետևյալ բնութագրերի.

- Հրապարակման մասին հիմնական տեղեկություններ. ամսաթիվ, լրատվամիջոցի անվանում, վերնագիր;
- Նշում այն մասին, թե դա վերաբերմունք/կարծիք է, թե՞ արժեքների մասին միտք;
- Վերաբերմունք կամ կարծիք արտահայտողը (լրագրող, թեկնածու, ՀԿ գործիչ, պետական ծառայող, քաղաքացի և այլն) կամ արժեքների մասին միտք արտահայտողը (կուսակցություն կամ թեկնածու);
- Այն թեկնածուն, կուսակցությունը կամ երևույթը (օր.՝ ընտրություններ, ներքին քաղաքականություն, շրջակա միջավայր, սոցիալական խնդիրներ, շինարարություն և այլն) որին ուղղված է տվյալ վերաբերմունքը, կարծիքը կամ արժեքը;
- Վերաբերմունքի կամ արժեքի մասին միտք պարունակող մեջբերման թեման (օր.՝ ընտրություններ, ներքին քաղաքականություն, շրջակա միջավայր, սոցիալական խնդիրներ, շինարարություն և այլն), որպեսզի հնարավոր լինի բացահայտել, թե որ հիմնախնդիրներն են առավել լուրջ և հրատապ համարվում;
- Վերաբերմունքի կամ արժեքի մասին միտք պարունակող մեջբերումը ամբողջությամբ, բնագրի լեզվով (հայերեն կամ ռուսերեն);
- Սկզբնաղբյուրի համացանցային հղումը (հասցեն):

Վերլուծության ճշգրտությունը ապահովելու համար հետազոտողների խումբը նախապատրաստել էր հնարավոր թեմաների ցանկ, որոնց կարող էին անդրադառնալ կուսակցությունները կամ թեկնածուները քարոզարշավի ընթացքում: Դրանց թվում կային թե՛ ընդհանուր թեմաներ, ինչպիսիք են՝ «ընտրություններ», «ներքին քաղաքականություն», «սոցիալական խնդիրներ», և թե՛ ավելի կոնկրետ թեմաներ, օրինակ, «շինարարություն», «բարեկարգում», «տրանսպորտ» և այլն, որոնք սովորաբար քաղաքաշինության հետ կապված քննարկումների առարկա են դառնում:

Մեջբերումների հեղինակները չեն գրանցվել տվյալների բազայում, այսինքն՝ նրանց անունները չեն հիշատակվել: Փոխարենը՝ նշվել է հեղինակի հիմնական զբաղմունքը: Մեջբերումների հեղինակների առնչությամբ օգտագործվել են հինգ կատեգորիաներ, այդ թվում՝ «քաղաքական գործիչ», «լրագրող», «հասարակական գործիչ» և «քաղաքացի»: Վերջին կատեգորիան կիրառվել է դեպքերում, երբ կարծիքը արտահայտվել է փողոցում հանդիպած կամ լսարանից հանդես եկած որևէ անձի կողմից և չի հաջողվել ճշտել նրա զբաղմունքը: Վերջապես, հինգերորդ կատեգորիան՝ «թեկնածուն» վերապահվել է քաղաքապետի թեկնածուներին, այսինքն՝ կուսակցությունների ընտրական ցուցակի առաջին համարը զբաղեցնողներին: Քաղաքական կուսակցությունների մյուս անդամները, անկախ այն բանից, թե մասնակցու՞մ են արդյոք ընտրություններին, թե՞ ոչ, նշվել են որպես «քաղաքական գործիչ»:

Նպատակ էր հետապնդվում՝ բացահայտել, թե արդյոք թեկնածուներն ու կուսակցությունները կսահմանափակվեն միայն ընդհանուր բնույթի հայտարարություններով և խոստումներով, ինչպես դա տեղի ունեցավ խորհրդարանական ընտրությունների նախընտրական պայքարում[1], թե՞ այս անգամ ավելի մեծ կոնկրետությամբ հանդես կգան և մանրամասնորեն կանդրադառնան քաղաքի խնդիրներին:

Որպես օրինակ ստորև բերվում է տվյալների բազայից մեկ հատված.

325	22.04	1in.am	«Ժառանգությունն» ու ՀԱԿ-ը պայքարում են ոչ թե իշխանության, այլ իրար դեմ. Ա. Իսկանդարյան	attitude	փորձագետ		ՀՀԿ	**Ընտրություններ**		Հանրապետական կուսակցությունը չունի լուրջ մրցակից	http://www.1in.am/arm/a
326	22.04	1in.am	«Ծառուկյանը կոպիտ սխալ թույլ տվեց, բայց նրան վախեցրել էին»	attitude	թեկնածու	ԲՀԿ	ՀՀԿ	**Ներքին քաղաքականություն**	Ընտրություններ	պետք է կոտրել ՀՀԿ-ի քաղաքական մենաշնորհը, և եթե դա իրենց հաջողվի անել, երկրում լրջագույն փոփոխություններ կիրականացնեն	http://www.1in.am/arm/a
327	22.04	1in.am	Ընտրություններով անվստահություն հայտնեք իշխանությանը և «այո»՝ Դաշնակցությանը. ՀՅԴ-ն՝ Խարբերդում	Value	թեկնածու	ՀՅԴ	ՀՅԴ	**Ընտրություններ**	Ներքին քաղաքականություն	Երևանում քաղաքապետ փոխելով, մանավանդ ընդդիմադիր դաշնակցական քաղաքապետ ունենալով՝ Երևանը մեր աչքի առաջ կփոխվի, իսկ Երևանի հետ միասին Հայաստանը կփոխվի	http://www.1in.am/arm/a
328	22.04	1in.am	Ինչո՞ւ Գագիկ Բեգլարյանը չի մասնակցում Տարոն Մարգարյանի քարոզարշավին	Value	քաղաքական գործիչ	ՀՀԿ	ՀՀԿ	**Ընտրություններ**	Ներքին քաղաքականություն	Տարոնը երբեք չի օգտվել հոր թողած իրավունքներից	http://www.1in.am/arm/a
329	22.04	1in.am	Ընդդիմությունը պետք է կոռպաշտությունից դուրս գա. Աղվան Վարդանյան	Value	քաղաքական գործիչ	ՀՅԴ		**Ընտրություններ**	Ներքին քաղաքականություն	Դաշնակցությունը պայքարի մեջ է իր ողջ ներուժով, անելու ենք հնարավորը, որ միակուսակցական համակարգը կոտրվի	http://www.1in.am/arm/a
330	23.04	1in.am	Ստեպան Սաֆարյանի պատասխանը ՀՅԴ նախընտրական շտաբի «սրամտություններին»	attitude	քաղաքական գործիչ	Բարև Երևան	ՀՅԴ	**Ընտրություններ**	Ներքին քաղաքականություն	ՀՅԴ-ին չեմ համարել ու չեմ էլ համարելու մրցակից այս ընտրություններում	http://www.1in.am/arm/a

[1] Տես՝ «Предвыборные обещания партий» մշտադիտարկման արդյունքները, «Կովկասի Ինստիտուտ», Երևան, մայիս 2012թ., URL: [http://www.c-i.am/wp-content/uploads/2012/05/brief-prefinal.pdf], (ռուսերեն)

Տվյալների բազայի բովանդակությունը հետագայում վերլուծության է ենթարկվել, նպատակ ունենալով՝ (1) բացահայտել քաղաքական կուսակցությունները ներկայացնող թեկնածուների հիմնական վերաբերմունքները և նրանց կրած արժեքները, (2) գնահատել ընտրանքում ընդգրկված առցանց լրատվամիջոցների կողմից ընտրապայքարի լուսաբանումը: Քանի որ մշտադիտարկման ընթացքում կիրառված մեթոդաբանությունը զուտ որակական էր, քանակական արդյունքներ չեն գրանցվել:

Հետազոտական խմբի ստացած արդյունքները ցուցադրելու նկատառումով սույն հաշվետվությունում զետեղված են սկզբնաղբյուրներից վերցված մեջբերումներ: Մեջբերումներում ներկայացվում է բնագրից կատարված մեջբերումը, դրա սկզբնաղբյուր հանդիսացող լրատվամիջոցը, հոդվածի վերնագիրը և հրապարակման ամսաթիվը: Թեև առցանց ԶԼՄ-ները այժմ մեծամասամբ պահպանում են ամբողջական և պարբերաբար թարմացվող արխիվներ, սակայն որոշները այդպես չեն վարվում, ինչի հետևանքով հնարավոր է, որ ներկա դրությամբ բնագրային մեջբերումներից ոչ բոլորը հասանելի լինեն:

Ընտրարշավը

Զեկույցի այս բաժնում ի մի են բերվում քաղաքական իրավիճակի վրա ազդեցություն թողած ավագանու ընտրություններին նախորդող իրադարձությունները, ընթերցողին ներկայացվում են ընտրություններին մասնակցող կուսակցությունները և հանրագումարի են բերվում մշտադիտարկման ենթարկված լրատվամիջոցների կողմից իրականացված լուսաբանումները:

Ընտրությունների տարին

2012թ.-ի մայիսից 2013թ.-ի մայիս ընկած ժամանակաշրջանը Հայաստանում երբեմն անվանում են «ընտրությունների տարի»: Այդ 12 ամիսների ընթացքում Հայաստանում անցկացվել են չորս ընտրություններ. 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին հաջորդեցին 2012թ. սեպտեմբերին կայացած ՏԻՄ ընտրությունները, այնուհետև՝ 2013թ. փետրվարի 18-ին տեղի ունեցան ՀՀ Նախագահի ընտրությունները և վերջապես, 2013թ. մայիսի 5-ին՝ Երևան քաղաքի ավագանու ընտրությունները:

Ինչպես և կարելի էր ենթադրել, յուրաքանչյուր հաջորդ ընտրություն կրում էր նախորդի հզոր ազդեցությունը և հակառակը՝ այն հանգամանքը, որ շուտով կայանալու են հաջորդ ընտրությունները, զգալիորեն անդրադառնում էր նախորդի իրականացման վրա: Օրինակ, 2012թ.-ի խորհրդարանական ընտրությունները ծառայեցին որպես 2013թ.-ի նախագահական ընտրությունների նախաքվեարկություն, իսկ 2012թ.-ի սեպտեմբերին տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները թույլ տվեցին իշխող կուսակցությանը համախմբվել՝ հաջորդ տարվա սկզբին կայանալիք նախագահական ընտրություններին ընդառաջ: Ու թեև բոլոր չորս ընտրությունները այս կամ այն չափով ազդեցություն ունեցան մեկմեկու վրա, կարելի է ենթադրել, որ այդ փոխազդեցությունը առավել անմիջական և նշանակալի էր 2013թ.-ին կայացած ՀՀ Նախագահի փետրվարյան և Երևան քաղաքի ավագանու մայիսյան ընտրությունների դեպքում: Հաշվի առնելով այդ երկուսի տարբեր մակարդակները՝ համապետական և քաղաքային, ինչպես նաև առաջինի արդյունքների ազդարարումից մինչև երկրորդի քարոզարշավի մեկնարկը ընկած փոքր ժամանակամիջոցը, կարելի է պնդել, որ ՀՀ Նախագահի ընտրությունների ընթացքն ու արդյունքները հզոր ազդեցություն թողեցին Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական պայքարի վրա և մի շարք առումներով վճռորոշ հանդիսացան վերջինիս համար: Կարելի է նաև պնդել, որ 2013թ. մայիսի

նախագահական ընտրությունները ընտրական տարվա գագաթնակետն էին, իսկ Երևանի ավագանու ընտրությունները քարոզարշավի և քաղաքական պայքարի ուժգնության առումով շատ ավելի պակաս դրամատիկ էին:

ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն, Երևան քաղաքի ավագանու ընտրությունների քարոզարշավը մեկնարկեց քվեարկության օրվանից վեց շաբաթ առաջ՝ 2013թ.-ի ապրիլի 7-ին: Այդ պահի դրությամբ նախագահական ընտրությունների հետևանքները դեռևս իրենց զգացնել էին տալիս: Թեև գործող նախագահը վերընտրվել էր ևս մեկ ժամկետով, ընդդիմադիր թեկնածուներից մեկը՝ «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը, հավաքել էր ընտրողների ձայների 37%-ը, ինչը մեծագույն նվաճում էր ընդդիմության համար ընդհանրապես, և Ռաֆֆի Հովհաննիսյանի համար՝ հատկապես: Վերջին երկու տասնամյակներում ձևավորված քաղաքական ավանդույթի համաձայն, ընդդիմադիր թեկնածուն հրաժարվեց ճանաչել իր պարտությունը, իրեն հայտարարեց իրական հաղթող և ընտրություններին հաջորդող շաբաթների ընթացքում շարունակեց իր աջակիցներին հավաքել Ազատության հրապարակում:

Այդպիսով, զանգվածային վերջին հանրահավաքները ի աջակցություն Ռաֆֆի Հովհաննիսյանի տեղի ունեցան ապրիլի 9-ին, այսինքն՝ քաղաքի ավագանու ընտրությունների քարոզարշավի մեկնարկից երկու օր անց: Այս հետընտրական հանրահավաքները գրավեցին լրատվական դաշտը ոչ միայն ապրիլի 9-ին, այլև հաջորդ մի քանի օրերին:

Ավելին, նույն անձը՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը, և իր գլխավորած «Ժառանգություն» կուսակցությունը Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու համար ստեղծեցին «Բարև Երևան» դաշինքը, թեև քաղաքապետի պաշտոնին առաջադրելով մեկ այլ թեկնածուի: «Բարև Երևան»-ը դարձավ քաղաքի ավագանու ընտրարշավին մասնակցող գլխավոր ուժերից մեկն էր: Այս հանգամանքի բերումով, ԶԼՄ-ները ընտրապայքարի ողջ ընթացքում մեծ ուշադրություն էին հատկացնում պրն. Հովհաննիսյանին և իր կուսակիցներին: Այնուհանդերձ, այդ հոդվածների գերակշիռ մեծամասնությունում քննարկվում էին ոչ թե Երևանի ավագանու, այլ՝ նախագահական ընտրությունների հետ կապված իրադարձությունները: Լուսաբանման այս արտաքին միակողմանիության պատճառով ուսումնասիրության մեջ կանխակալության առաջացման վտանգից խուսուփելու համար հետազոտական խումբը որոշեց նման նյութերը չընդգրկել տվյալների բազայում, բացառությամբ այն դեպքերի, երբ անմիջականորեն շոշափվում էր «Բարև Երևան» դաշինքը:

Մասնակցող կուսակցությունները

2013թ. մայիսի 5-ին Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցում էին 6 կուսակցություն և կուսակցությունների 1 դաշինք ներկայացնող թեկնածուներ:[2] Հաշվետվության այս բաժնում ներկայացվում են կուսակցությունները և թեկնածուները՝ ըստ իրենց հավաքած ձայների թվաքանակի, աճողական կարգով:[3]

«Առաքելություն» կուսակցություն

Շատ քիչ բան կարելի է ասել «Առաքելություն» կուսակցության մասին: Հայաստանի քաղաքական կյանքում գործող այս նոր դերակատարը հայտնվել է քաղաքի ավագանու ընտրություններից մի փոքր առաջ և չունի արձանագրված քաղաքական պատմություն: Կուսակցության ղեկավար Մեսրոպ Առաքելյանը[4] գրեթե անհայտ է հանրությանը:

Ավելին, «Առաքելություն» կուսակցությունը չունի համացանցային կայք: Facebook-ում զետեղված կայքէջում նշվում է, որ կուսակցությունը հիմնվել է 2013թ. փետրվարի 2-ին, այսինքն՝ Երևան քաղաքի ավագանու ընտրություններից ընդամենը 3 ամիս առաջ:[5] Համաձայն նույն կայքէջի՝ «Առաքելություն» կուսակցությունը ժողովրդավարական, ազատական քաղաքական ուժ է, որի հիմնական սկզբունքն է «ոչ թե քաղաքացին իշխանության համար, այլ իշխանությունը՝ քաղաքացու»: [6] Կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարը Մեսրոպ Առաքելյանն էր:

«Օրինաց երկիր» կուսակցություն

Հայաստանցի ընտրողը քաջածանոթ է «Օրինաց երկիր» կուսակցությանը (ՕԵԿ): Այն հիմնադրվել է 1997թ.-ին և պաշտոնական գրանցում ստացել դրանից մեկ տարի անց: ՕԵԿ-ը ազատական կուսակցություն է և նրա գաղափարախոսական կիզակետը մարդն է, նրա ազատությունն ու իրավունքները: Կուսակցության հիմնական և

---

[2] ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, 2013թ. մայիսի 5-ի Երևանի ավագանու ընտրությունների համար գրանցված թեկնածուներ, URL: [http://www.elections.am/council/election-25550/#t1]

[3] Տես՝ 2013թ. մայիսի 5-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների վերջնական արձանագրություն, ԿԸՀ պաշտոնական կայք, 12.05.2013, URL: [http://res.elections.am/images/doc/05.05.13v.pdf]

[4] ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, 2013թ. մայիսի 5-ի Երևանի ավագանու ընտրությունների համար «Առաքելություն» կուսակցության թեկնածուների ընտրական ցուցակ URL: [http://www.elections.am/council/]

[5] «Առաքելություն» կուսակցության Facebook-ի պաշտոնական կայք, URL: [https://www.facebook.com/arakelutyun/info]

[6] Նույն տեղում.

վերջնական նպատակն է՝ օրենքի գերակայության երկրի ստեղծումը, որը կուսակցության տեսանկյունից երկրի զարգացման և քաղաքացիների բարեկեցության ապահովման միակ երաշխիքն է:[7]

Ընտրությունների ժամանակ ՕԵԿ-ը իշխող ՀՀԿ-ի միակ կոալիցիոն գործընկերն էր: 2012թ. մայիսի 30-ին կնքված կոալիցիոն համաձայնագրով ՕԵԿ–ը ստացել է երեք նախարարական պորտֆել[8]: Այս դաշինքը ինչ–որ չափով վնասել է ՕԵԿ-ի հեղինակությանը, քանի որ այժմ այն ընկալվում է որպես իշխող կուսակցության կցորդ, հատկապես՝ քանի որ ՕԵԿ-ը նախկինում էլ, տարբեր ձևաչափերի ընտրությունների ժամանակ հայտնի է եղել որպես ընտրությունները փչացնող ուժ: ՕԵԿ-ի ներկայիս իմիջի հետ կապված խնդիրները Երևանի քաղաքապետի թեկնածու Արմեն Երիցյանին ստիպեցին հայտարարել, որ «ՕԵԿ-ը ՀՀԿ-ի ոչ կցորդն է, ոչ էլ կրտսեր եղբայրը»[9]:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն (ՀՅԴ)

ՀՅԴ-ն այստեղ ներկայացվածներից ամենահին կուսակցությունն է, ինչպես նաև՝ ընտրությունների ժամանակամիջոցում առհասարակ հայաստանյան քաղաքական կյանքում ակտիվ ամենահին կուսակցությունը: Այն հիմնադրվել է 1890թ.-ին և իշխող կուսակցություն է դարձել 1918-1920թթ., սակայն նրա գործունեությունը արգելվել է ԽՍՀՄ-ում և այն վերագրանցում է ստացել միայն Հայաստանի անկախության հռչակումից հետո, 1991թ.-ին: ՀՅԴ-ն նաև այս ընտրարշավին մասնակցող միակ սոցիալիստական կուսակցությունն էր[10] և փաստորեն գաղափարախոսություն ունեցող միակ կուսակցությունը հայկական քաղաքական կյանքում: Թեպետ այդ կուսակցության գաղափարախոսությունը անհստակ է՝ սոցիալիզմի և ազգայնականության յուրատեսակ խառնուրդ, այդուհանդերձ դա որոշակի գաղափարախոսություն է կամ գոնե՝ արժեհամակարգ, մինչդեռ 2012-2013թթ.-ի ընտրական տարեշրջանում բոլոր ընտրություններին մասնակցած բոլոր մյուս կուսակցությունները իրենցից ներկայացնում էին կամ տարատեսակ բազմընդգրկուն կուսակցություններ կամ էլ խարիզմատիկ միանձնյա առաջնորդի

[7] «ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ընտրողի ուղեցույց 2012թ.», ՔՍԶՀ, էջ 141, URL: [http://www.fcsd.am/PDFs/Guide%202012%20%20Armenian.pdf]

[8] Состав армянского правительства Армении изменится после президентских выборов 2013 года - запредпартии, 21 հունիսի 2012, URL: [http://www.newsarmenia.ru/politics/20120621/42683072.html], (ռուսերեն)

[9] “Армен Ерицян намекнул, в каком случае развалится коалиция с РПА”. «Առավոտ» օրաթերթ, 29 ապրիլի 2013թ. URL: [http://ru.aravot.am/2013/04/29/155422/], (ռուսերեն)

[10] ՀՅԴ–ն նաև «Սոցիալիստական ինտերնացիոնալ»-ի անդամ է:

կուսակցություններ: Կուսակցության գաղափարախոսական հենքն է «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի կերտում, որն ի վիճակի կլինի բավականաչափ զարգանալ՝ իր քաղաքացիների կարիքները հոգալու համար»:[11] ՀՅԴ-ն Հայաստանի քաղաքական կյանքում դեպի Սփյուռք ամենամեծ ուղղվածությունն ունեցող կուսակցությունն է Հայաստանում և ավելի հզոր դիրքեր ունի Սփյուռքում, քան՝ ՀՀ-ում:

2003-2009թթ.-ին կուսակցությունը իշխող կոալիցիայի անդամ էր, սակայն հայ–թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո դուրս եկավ կոալիցիայից և միացավ ընդդիմությանը: Կուսակցությունը իրեն հպարտորեն ներկայացնում է որպես հայ ազգային շահերի պահապան և անկախության խորհրդանիշ: ՀՅԴ-ն առավելագույն հաջողության հասել է 2007թ.-ի ընտրություններին, ստանալով ձայների 13%-ը, բայց հետագայում աստիճանաբար կորցրել է ժողովրդականությունը և 2012թ.-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով ստացել է ձայների ընդամենը 6%-ը: Այս ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարն էր Արմեն Ռուստամյանը:

Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ)

Հայ ազգային կոնգրեսը մեկնարկեց որպես 2008թ.-ին ընդդիմադիր լայն պլատֆորմի հիման վրա 18 կուսակցություններից կազմավորված դաշինք: Կոնգրեսի միջուկ է հանդիսացել «Հայոց համազգային շարժումը», որը 1990-ականներին ՀՀ առաջին իշխող կուսակցությունն էր, իսկ իշխանությունը կորցնելից հետո դարձել է ընդդիմադիր ուժ: ՀԱԿ-ի առաջնորդը անկախ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ (1991-1998թթ.) Լևոն Տեր-Պետրոսյանն է: Կոնգրեսի բնորոշմամբ այն կենտրոնամետ, սահմանադրամետ քաղաքական ուժ է, ի տարբերություն Հայաստանում գործող որոշ այլ կուսակցությունների, որոնք ներկայանում են որպես պահպանողական[12]: Սակայն ՀԱԿ-մ ըստ էության բողոքի հարթակ է և ոչ թե գաղափարախոսական խումբ:

ՀԱԿ-ը ՀՀԿ-ի հանդեպ արմատական ընդդիմություն է համարվում, վերջին 5 տարիների ընթացքում կազմակերպելով բողոքի հանրահավաքներ ու ցույցեր: ՀԱԿ-ի քաղաքական ակտիվության հիմնական մեթոդը փողոցային քաղաքականությունն է,

[11] «ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ընտրողի ուղեցույց 2012թ.», ՔՍԶՀ, էջ 102, URL: [http://www.fcsd.am/PDFs/Guide%202012%20%20Armenian.pdf]

[12] Naira Hayrumyan. Ter-Petrosyan: Congress suggests following Constitution instead of preaching “ethno-religious ideology”. ArmeniaNow, Dec. 6, 2010. URL: [http://www.armenianow.com/news/politics/26300/levon_terpetrosian_armenia_opposition] (անգլերեն)

այսինքն՝ բողոքի հանրահավաքներն ու երթեր: Սակայն ՀԱԿ-ը աստիճանաբար կորցրել է իր ժողովրդականությունը և 2012թ. ընտրություններին հավաքել ձայների ընդամենը 7%-ը: 2013թ. փետրվարին դաշինքը վերածվեց նույն անվանմամբ կուսակցության: Այդ պահի դրությամբ դաշինքի անդամ կուսակցություններից շատերն արդեն լքել էին այն: ՀԱԿ-ի կողմից քաղաքապետի թեկնածուն Վահագն Խաչատրյանն էր:

«Բարև Երևան» դաշինք

«Բարև Երևան» դաշինքը ձևավորվել է 2013թ. մարտին, «Ժառանգություն» կուսակցության հիման վրա. այն բանից հետո, երբ վերջինիս առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը ՀՀ Նախագահի 2013թ.-ի ընտրություններում գրավեց երկրորդ տեղը՝ հավաքելով ձայների 37%-ը: «Ժառանգությունը» իր իսկ բնորոշմամբ, «արմատներով ազգային, տնտեսական ուղեգծով՝ ազատական, կառավարման ժողովրդավարական համակարգի կողմնակից քաղաքական ուժ է, որն առաջնային խնդիր է համարում Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական, իրավական, իր ներքին ու արտաքին քաղաքականությունն ազգային ինքնիշխան շահի հիման վրա կառուցող զարգացած պետության կայացումը» [13]: Կուսակցությունը նաև ակտիվ է բնապահպանական հարցերում և մասնակցել է 2012թ.-ի քաղաքացիական հասարակության բողոքներին:

«Ժառանգությունը» ստեղծվել է 2002թ.-ին, իսկ 2007թ.-ից ներկայացված է խորհրդարանում, վայելելով ընտրողների 6-8%-ի կայուն աջակցությունը: 2012թ.-ի վերջին Ազգային ժողովի «Ժառանգության» խմբակցության 5 անդամներից 2-ը հեռացան և այժմ բաղկացած լինելով ընդամենը 3 անդամից՝ կուսակցության խմբակցությունը ամենափոքրաթիվն է խորհրդարանում: Կուսակցության կողմից քաղաքապետի պաշտոնին առաջադրված թեկնածուն Արմեն Մարտիրոսյանն էր:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

«Բարգավաճ Հայաստան»-ի խմբակցությունը Ազգային ժողովում մեծությամբ երկրորդն է: ԲՀԿ-ն հիմնադրվել 2004թ.-ին: Կուսակցության առաջնորդը Գագիկ Ծառուկյանն է, ով հանրապետության խոշորագույն գործարարներից մեկը հանդիսանալով, իր տնտեսական հզորությունը վերածել է քաղաքական ուժի: Կուսակցությունը ներկայանում է որպես աջ-կենտրոնամետ և պահպանողական ուժ,

[13] «Ժառանգություն» կուսակցության պաշտոնական կայք, «Մեր մասին» բաժին: URL: [http://www.heritage.am/en/about]

որը մերժում է դոգմատիզմը[14] և իրականում, չափազանց ճկուն է գաղափարախոսական հարցերում:

Կուսակցության հիմնական ընտրազանգվածը գտնվում է Երևանից դուրս: 2012թ. խորհրդարանական ընտրություններում կուսակցությունը առավելագույն աջակցություն է ստացել ՀՀ Կոտայքի մարզում: Համամասնական ընտրակարգով ԲՀԿ-ն հավաքել է ձայների 30%-ը և ներկայումս 131 հոգուց բաղկացած Ազգային ժողովում ունի 36 պատգամավոր: ԲՀԿ-ն քաղաքապետի պաշտոնին առաջադրել էր Վարդան Օսկանյանին:

Հայաստանի հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)

ՀՀԿ-ն, որին հաճախ անվանում են իշխող կուսակցություն, հիմնադրվել է 1990թ.-ին և պաշտոնապես գրանցվել 1991թ.-ին: Գաղափարախոսական տեսանկյունից այն պահպանողական կուսակցություն է[15]: ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը միաժամանակ հանդիսանում է ՀՀԿ-ի նախագահը:

ՀՀԿ-ն 1995թ.-ից մասնակցել է ընտրություններին և խորհրդարանում հարաբերական մեծամասնություն է ձեռք բերել 2003թ.-ից:[16] Այդ ժամանակից ի վեր եղել է Հայաստանի իշխող կուսակցությունը: 2012թ.-ին Հանրապետական կուսակցությունը բացարձակ մեծամասնություն ստացավ խորհրդարանում, իսկ ՀՀ Ազգային Ժողովի 2012թ.-ի ընտրություններից առաջ ՀՀԿ-ն միշտ կոալիցիա է կազմել խորհրդարանում ներկայացված 3 կամ նույնիսկ 4 այլ կուսակցությունների հետ: Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը նույն պաշտոնի համար թեկնածու էր առաջադրվել ՀՀԿ-ի կողմից:

Լրատվամիջոցների կողմից լուսաբանման մշտադիտարկման արդյունքները

Մեր ընտրանքը բաղկացած էր հինգ առցանց ԶԼՄ-ներից, որոնք ընտրվել էին իրենց վայելած ժողովրդականության, այն է՝ հայաստանցի օգտատերերի կողմից դրանց համացանցային կայքեր կատարած այցելությունների թվի հիման վրա: Ընտրարշավի ընթացքում մշտադիտարկված 5 առցանց ԶԼՄ-ների աշխատանքի մասին եզրահանգումները կտրվեն զեկույցի հիմնական բաժնում: Այս բաժնում

[14] «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պաշտոնական կայք, «Կուսակցության Կանոնադրություն, ծրագիր» բաժին. URL: [http://www.bhk.am/index.php?al=statute]
[15] «ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ընտրողի ուղեցույց 2012թ.», ՔՍԶՀ, էջ 122, URL: [http://www.fcsd.am/PDFs/Guide%202012%20%20Armenian.pdf]
[16] Հայաստանի Հանրապետական կուսակցության պաշտոնական կայք, «Կուսակցության պատմությունը» բաժին, URL: [http://hhk.am/hy/history/]

հակիրճ կերպով կանդրադառնանք ընտրանքում եղած բոլոր հինգ լրատվամիջոցների ընդհանուր պարամետրերին:

1. Ընտրարշավի լուսաբանումը բոլոր 5 նշված լրատվամիջոցների կողմից մեծապես համանման էր: Գրեթե չորս շաբաթ տևած մշտադիտարկման ընթացքում հնարավոր չեղավ գտնել հիշատակման արժանի որևէ նշանակալի առանձնահատկություններ: Այս լրատվամիջոցները ոչ միայն տեղեկացնում և լուսաբանում էին Հայաստանի ներքին քաղաքականության մեջ տեղի ունեցող նույն իրադարձությունների ու զարգացումների մասին, այլև կարծես համամիտ էին այն հարցում, թե ինչ ոճով դրանք պետք է ներկայացվեն հանրությանը:

Օրինակ, գալիք ընտրություններում ԲՀԿ-ի շանսերը քննարկելիս երկու տարբեր լրատվամիջոց օգտագործել են, ըստ էության, նույն բառերը:

> “...ԲՀԿ-ի վիճակն ընդհանրապես անմխիթար է...”
>
> **News.am** / *Ընտրություններին հաղթելու է փողը, իսկ կուսակցություն-ների վիճակն անմխիթար է* / հեղ. լրագրող, ապրիլ 25

> “...ԲՀԿ-ի վիճակը բավականին դժվար է այս պայքարում ...”
>
> **1in.am** / *Կկարողանա՞ ԲՀԿ-ն դուրս գալ ձախողումների շրջափուլից* / Հեղինակ. լրագրող, ապրիլ 27

Ուշագրավ է, որ այս նյութերը լույս են ընծայվել ընդամենը մի քանի օր տարբերությամբ:

2. Բոլոր հինգ առցանց լրատվամիջոցները մեծ եռանդով քննադատել են իշխանություններին և նրանց կատարած աշխատանքը, ոչ միայն Երևան քաղաքի ավագանու ընտրություններին նախորդող ժամանակահատվածում, այլև՝ դրանից շատ ավելի վաղ: Այստեղ հարկ է նշել, որ քննադատության չափը տարբերվել է ԶԼՄ-ների միջև (օր.՝ այն շատ ավելի մեծ էր 1in.am-ի դեպքում և զգալիորեն ավելի փոքր՝ news.am-ի դեպքում), սակայն քննադատությունը մշտապես առկա էր և տեսանելի: Այս հանգամանքը ցուցադրելու համար ստորև ներկայացված են մի շարք մեջբերումներ: Առաջինը վերաբերում է վերջին տարիներին ՀՀԿ-ի կատարած աշխատանքին, իսկ երկրորդն ուղղակիորեն կապված է ՀՀԿ-ի նախընտրական պայքարին: Երկարաժամկետ կտրվածքով

ՀՀԿ-ին քննադատում են իշխանության չարաշահման և պետության ու քաղաքացիների բարօրության մասին հոգ չտանելու համար:

> “...իշխանությունն է ստիպված լինելու հրաժարվել Հայաստանից՝ որպես պետական միավոր”
>
> **1in.am** / *Հայաստանի «անկեղծության» պահը* / Հեղինակ. լրագրող, ապրիլ 14

> “...ՀՀԿ-ն ունենալով ըստ էության անսահմանափակ ռեսուրսներ, հսկայական գումարներ ծախսելով «քարոզչական խմբի» վրա, ընդամենը կարողանում է գրագողություն՝ պլագիատ անել”
>
> **1in.am** / *Տարոնի սրտաճմլիկ նամակները. մամուլ/* Հեղինակ. լրագրող, ապրիլ 24

Թերևս, կարելի է պնդել, որ իշխանություններին քննադատող նյութերի առկայությունը փոխկապակցված է այն հանգամանքի հետ, որ նշված 5 ԶԼՄ-ները վարկանիշային աղյուսակի վերնամասում են: Այլ կերպ ասած, քննադատությունը «դյուրավաճառ ապրանք» է և ընդդիմադիր ԶԼՄ-ները Հայաստանում առավել ժողովրդականություն են վայելում: Սակայն այս ուսումնասիրությունը մեզ բավարար տվյալներ չի տալիս նման հայտարարություն անելու համար: Մենք կարող ենք միայն նշել այն փաստը, որ մեր ընտրանքում եղած բոլոր ԶԼՄ-ները բավականին քննադատաբար էին տրամադրված կառավարության նկատմամբ, թեպետ ընտրանքը կազմելիս այս պարամետրը հիմք չի ընդունվել:

3. Վերջապես, երրորդ եզրակացությունը վերաբերում է ընդդիմադիր ուժերի նկատմամբ մեր ընտրանքում ներառված հայաստանյան առցանց ԶԼՄ-ների վերաբերմունքին: Ի տարբերություն իշխանություններին ուղղված քննադատությանը, այս առումով ընդդիմադիր կուսակցությունները ավելի պակաս «ուշադրության» են արժանացել: Իշխող Հանրապետական կուսակցության և իշխանական կոալիցիայի անդամ հանդիսացող ՕԵԿ-ի համեմատ՝ ընդդիմադիր բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին ուղղված քննադատությունը սահմանափակ էր:

Իհարկե, ոչ բոլոր ընդդիմադիր կուսակցություններն էին նույն վերաբերմունքին արժանանում: «Բարև Երևան» դաշինքը ստացավ քննադատության իր բաժինը, սակայն ինչպես արդեն նշվեց, դա հիմնականում կապված էր կուսակցության առաջնորդի և 2013թ.-ի փետրվարին անցկացված նախագահական ընտրություններից հետո նրա կայացրած որոշումների հետ:

Երբեմն քննադատությունը քողարկված էր.

> “...Աղվան Վարդանյանը ասուլիսի ընթացքում ջանք ու եռանդ չէր խնայում Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին քննադատելու համար:”
>
> **Tert.am** / *Աղվան Վարդանյանը 7 տարի զբաղեցրել է առցապ. նախարարի պաշտոնը Տարոնի հոր կառավարությունում* / Հեղինակ. լրագրող, ապրիլ 17

Անուամենայնիվ, ընտրանքում ներառված հայաստանյան առցանց լրատվամիջոցներում որպես ընդհանուր միտում արձանագրվեց ընդդիմադիր կուսակցությունների քննադատությանը ավելի պակաս ժամանակ հատկացնելը:

Կուսակցություններ

Այս բաժնում ներկայացվում են այն վերաբերմունքներին և արժեքներին վերաբերող մշտադիտարկման արդյունքները, որոնք, ***ըստ առցանց ԶԼՄ-ների***, արտահայտել են քաղաքական կուսակցությունները քարոզարշավի ժամանակ: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մենք չենք կարող բացառել, որ այս կամ այն կուսակցությունն իսկապես հայտարարել կամ արել է ԶԼՄ-ներում չլուսաբանված որևիցե բան: Տեղեկատվության մեր աղբյուրները սահմանափակվում էր առցանց ԶԼՄ-ներով տարածված 15.000 պատմություններով, որոնք մենք հասցրել ենք ընթերցել քարոզարշավի ընթացքում: Սույն ուսումնասիրության նպատակն է գնահատել, թե արդյոք առցանց ԶԼՄ-ները ընտրողներին բավարար տեղեկություններ և վերլուծություններ են տրամադրել՝ իրազեկ ընտրություն կատարելու համար:

Վերաբերմունքներ

Հինգ առցանց ԶԼՄ-ներում ավելի քան 15.000 նյութ ուսումնասիրելուց և դրանց հետագա վերլուծությունը կատարելուց հետո հետազոտողները թեմատիկ սկզբունքով խմբավորեցին քաղաքական կուսակցությունների, թեկնածուների, լրագրողների և այլոց արտահայտած վերաբերմունքները ստորև բերված մի քանի խորագրերի տակ:

Ընտրություններ. քաղաքական, թե՞ ապաքաղաքական

Մշտադիտարկման ընթացքում երկու տարբեր վերաբերմունք նշմարվեց Երևան քաղաքի ավագանու ընտրությունների նկատմամբ: Ընտրապայքար վարող որոշ քաղաքական ուժեր ջանք ու եռանդ չէին խնայում իրենց ընդդիմախոսներին և ինչն ավելի կարևոր է՝ ընտրողներին ապացուցելու համար, որ գալիք ընտրությունները իրենց բնույթով խորապես քաղաքական են:

> “...իշխանությունները իրենց այնպես են պահում, ասես չեն գիտակցում, որ Երևանի ավագանու ընտրությունները քաղաքական ինչ նշանակություն ու դեր ունեն, ու իրենց այնպես են պահում, ասես գյուղապետի ընտրութուններ են ու կենցաղ-կոմունալ խնդիրներ են լուծում: ”
>
> **Tert.am** / *Վերադասավորվել՝ վերաիմաստավորելու ու հզորացնելու շարժումը* / Հեղինակ.քաղաքական գործիչ, ՀՅԴ , ապրիլ 19

Այստեղ կարևոր է ընդգծել, որ նման պնդումներով հանդես եկողները ընդդիմադիր կուսակցություններն էին: Հարկ է նշել, որ այս ընտրապայքարում ընդդիմադիր վարքագիծ նկատվեց չորս կուսակցությունների գործողություններում՝ «Բարև Երևան» դաշինք, ՀԱԿԿ, ՀՅԴ և ԲՀԿ: Վերջինս նաև դրսևորում էր ընդդիմության հնարավոր առաջնորդի դերին հավակնողի կեցվածք, քանի որ ի տարբերություն մյուս երեքի, ոչ այնքան հաճախ էր քննադատում այլ ընդդիմադիր կուսակցություններին:

Վերոհիշյալ բոլոր չորս կուսակցությունները միանշանակորեն դիտարկում էին Երևանը որպես հայաստանյան քաղաքականության սիրտ: Եվ քանի որ այս ընտրությունները վերջինն էին առաջիկա չորս տարիների հորիզոնում, դա ամբողջ երկրի քաղաքական իրավիճակը փոխելու նրանց վերջին հնարավորությունն էր մոտակա ժամանակներում: Նրանց պատկերացմամբ Երևանը պետք է դառնար Հայաստանում նոր քաղաքական իրողությունների ձևավորման սկզբնակետը:

> “...Երևանի ավագանու ընտրությունները բացառիկ շանս են փոխելու իրավիճակը երկրում, ընդդիմության հաղթանակը կլուծի 4 խնդիր: 1. կթուլացնի ռեժիմի հնարավորությունները, 2. հնարավորություն կտա իշխանությունը քաղաքացուն վերադարձնել, 3. էապես կնվազի կոռուպցիան, 4. համակարգում շատ ավելի ազատ կշնչի քաղաքացին, բիզնեսը, գործարարը.”
>
> **News.am** / *Ի՞նչ խնդիրներ կլուծի ընդդիմության հաղթանակը Երևանի ավագանու ընտրություններում* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀԱԿ, ապրիլ 18

Նրանք հիմնականում շեշտում էին այն փաստը, որ Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է և ներկայումս բնակչության գրեթե կեսը բնակվում է այստեղ, ինչը նշանակում է, որ Երևանի քաղաքական նշանակությունը ավելին է, քան՝ զուտ որպես մայրաքաղաք:

> “...Մայիսի 5-ին որոշվելու է Հայաստանի մայրաքաղաքի ճակատագիրը, երկրի բնակիչների մեծ մասի ճակատագիրը: Երեւանի ավագանու ընտրությունները քաղաքական ընտրություններ են: ”
>
> **News.am** / *ԲՀԿ-ական պատգամավոր. Երեւանի ավագանու ընտրությունները քաղաքական ընտրություններ են* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ԲՀԿ, ապրիլ 11

Հաղթանակը Երևանում նրանց թույլ կտար սկսել փոփոխությունների մի շղթա, մինչդեռ իշխող կուսակցության հաղթանակը կարգելակեր ամեն տեսակի զարգացումները, համենայն դեպս, մոտակա չորս տարիներին: Ահա թե ինչու էր նրանց համար այս ընտրություններում այդքան կարևորվում հաղթանակը:

> “...Եթե ուզում ենք երկրում լրջագույն փոփոխություններ սկսել, որոնք էական դրական տեղաշարժեր կարող են բերել Ձեր կյանքում, ապա պետք է սկսել մայիսի 5-ից:”
>
> **Asekose.am** / *Երևանի բյուջեի ծախսումներում կորուստներն ու մսխումները շատ են* / Հեղինակ. թեկնածու, ԲՀԿ , ապրիլ 29

Այս ամենին հակառակ, իշխող ՀՀԿ-ն ընտրությունները համարում էր ապաքաղաքական: ՀՀԿ–ն նույնպես մատնանշում էր դրանց կարևորությունը, սակայն՝ լոկ այն պատճառով որ Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է և նրա զարգացումը, անկասկած, երկրի գերակա խնդիրներից մեկն է: Այդուհանդերձ, ՀՀԿ-ն ժխտում էր ընտրությունների քաղաքական բնույթը:

> “...մեր ծրագիրը քաղաքական չէ, ինչպես քաղաքական չեն ընտրությունները:”
>
> **News.am** / *Ես հաշվետու եմ նաև իմ հոր եւ իր հիշատակի առջեւ.* /

> “...Ինչ խոսք, մի կողմից ուրախալի է, որ բոլոր քաղաքական ուժերը համախմբված ցանկանում են բարեկարգել Երևանը, փոփոխել, կառուցել, լուսավորել, կանաչապատել, բայց մյուս կողմից սա մրցակցություն է, և մենք ի սկզբանե հայտարարել ենք, որ եկեք ավագանու ընտրությունները չքաղաքականացնենք”
>
> **News.am** / *Եթե քաղաքական ուժը թեկուզ մի ընտրություն բաց է թողնում, նա այլևս քաղաքական ուժ չէ* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀՀԿ, ապրիլ 26

Նույնիսկ կուսակցությունների կարգախոսները ծառայում էին այս ուղղությամբ իրենց փաստարկները հիմնավորելուն: ՀՀԿ-ն ընտրել էի շատ պարզ կարգախոս՝ «Ավելի լավ Երևան», ինչով ենթադրվում էր, որ փոփոխությունները տեղի են ունենալու բացառապես մայրաքաղաքում: Դրան հակառակ, ընդդիմադիրների կարգախոսները, ինչպիսիք էին՝ «Երևան, փոխիր Հայաստանը» (ՀՅԴ), կամ «Սկսենք Երևանից» (ԲՀԿ) ունեին հստակ քաղաքական ենթատեքստ և երկրի մասշտաբով գործողությունների կոչ էին հանդիսանում:

Իշխող կուսակցության «քաղաքական մենաշնորհը»

Ընտրապայքարի ժամանակ լայնորեն քննարկվող հարցերից ևս մեկը իշխող Հանրապետական կուսակցության քաղաքական մենաշնորհն էր: Այս մեղադրանքները հնչեցվում էին նաև բոլոր չորս ընդդիմադիր կուսակցությունների կողմից: Նրանց պնդմամբ, Հանրապետականները իրեն դաշնակից ՕԵԿ-ի հետ գրավել են բոլոր պաշտոնները և կառավարման լծակները, դրանով իսկ իրենց պլաններին ու ծրագրերին միջամտելու ոչ մի տեղ և հնարավորություն չթողնելով այլընտրանքային ուժերին:

> “...Յուրաքանչյուր երկրի համար աղետ է, երբ մի կուսակցություն ամբողջությամբ տիրապետում է իշխանությանը, սակայն ունի բավական ցածր վարկանիշ, ինչպես Հանրապետական կուսակցությունը”
>
> **News.am** / *Ընդդիմությունը պետք է ձգտի առավելագույն ձայներ ստանալ* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀՅԴ, ապրիլ 16

Սա իր հերթին չափազանց բացասաբար է անդրադառնում ամբողջ երկրի վրա, քանի որ մեծ հաշվով, իշխանությունները կարող են անել այն, ինչ կցանկանան, առանց հաշվի առնելու հնարավոր հետևանքները: Քաղաքական այս ճգնաժամը բերում է ահավոր սոցիալական պայմանների և երկրի բնակչության դժգոհությանը, ինչի հետևանքով մեծանում է արտագաղթը: Ընդդիմության կարծիքով այս իշխանությունները մտահոգված են միայն սեփական բարեկեցությամբ:

> “...այս տարիների ընթացքում ձևավորել ենք մի համակարգ, որը ծառայել է իշխանության բացարձակ մենաշնորհին: Կարծես, ամբողջ պետությունը՝ իր բոլոր գործառույթներով, մեկ նպատակի է ծառայում, որպեսզի կարողանա բավարարել, անհոգ կյանք պարգևել նրանց, ովքեր գտնվում են իշխանական մենաշնորհի տիրույթում՝ իրենց ազգ ու տակով, բարեկամներով”
>
> **Tert.am** / *Մայիսի 5-ին կլինեին սովորական ՏԻՄ ընտրություններ, եթե ՀՀ-ն նորմալ պետություն լիներ* / Հեղինակ. քաղաքական գործիչ, «Բարև Երևան» դաշինք, մայիս 1

Այստեղ կուսակցությունները կրկին անգամ շեշտում են Երևանի ավագանու ընտրությունների հույժ կարևորությունը, ոչ միայն մայրաքաղաքում, այլ՝ ամբողջ պետությունում դրական փոփոխություններ իրականացներու առումով:

> “...Երևանի ավագանու ընտրությունները քաղաքական ընտրություններ են, որտեղ վճռվելու է՝ կամ մեր երկիրը կմնա մենաշնորհի ներքո, կամ լուրջ փոփոխություններ կլինեն”
>
> **1in.am** / *Չեմ հավատում, որ նոր կառավարությունը բարեփոխումներ կանի* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ԲՀԿ, ապրիլ.11

Հետաքրքրական է, որ քաղաքական մենաշնորհի և արտագաղթի մասին ընտրապայքարի ընթացքում հաճախակի բարձրաձայնվող հիմնախնդիրները կապակցվում էին մեծ քաղաքականության հետ, անհնարին համարելով դրանց լուծումը համայնքային մակարդակով: Սակայն միայն այն փաստը, որ դրանք քննարկվում էին քաղաքի ավագանու ընտրությունների շրջանակում, վկայում է այն մասին, որ այդ ընտրությունների ընկալումը որոշ (այն է՝ ընդդիմադիր) կուսակցությունների կողմից խիստ քաղաքականացված էր:

Գաղափարախոսական ճգնաժամ

Այս ընտրապայքարի հիշարժան առանձնահատկություններից մեկը կուսակցությունների գաղափարախոսական բացահայտ ճգնաժամն էր: Մշտադիտարկման 27 օրերի ընթացքում չհաջողվեց գտնել գեթ մեկ նյութ, որտեղ կարծարծվեր ընտրապայքարի գաղափարախոսական հարթությունը:

Հետազոտողների խմբին հանդիպել են առցանց ԶԼՄ-ներում հրապարակած նյութեր, որտեղ կուսակցականները կամ թեկնածուները խոսում են իրենց ծրագրերի կամ դրանցում տեղ գտած որոշակի մտքերի մասին: Սակայն կուսակցություններից ոչ մեկը չի ներկայացրել իր ծրագիրը գաղափարախոսական տեսանկյունից՝ ձախ կամ աջ, ազատական կամ սոցիալիստական:

Ահա այս միտքը հաստատող մի քանի օրինակներ.

> “...վստահ ենք, որ դուք, սիրելի երևանցիներ, ձեր քվեն տալու եք անվճար մանկապարտեզին, բարեկարգ բակին, հարմարավետ տրանսպորտին, վերանորոգվող դպրոցներին, մշակույթի տներին, ...”
>
> **Slaq.am** / *Երևանը բոլորիս տունն է և պետք է աչքի ընկնի իր մաքրությամբ* / Հեղինակ. թեկանծու, ՀՀԿ, ապրիլ 9

> “...անհրաժեշտ է ավելացնել կանաչապատ տարածքները, Երևանն այսօր ծերացող քաղաքի տպավորություն է թողնում:”
>
> **1in.am** / *Օլիգարխների դեմ խաղ չկա, ոչ Երևանում, ոչ ընդհանրապես Հայաստանում* / Հեղինակ. թեկնածու, ԲՀԿ, ապրիլ 11

> “...յուրաքանչյուր տգեղությունից, որը այսօր կա Երևան քաղաքում, պետք է հրաժարվել և ժամանակի ընթացքում քաղաքը բարեկարգել, գեղեցկացնել, կանաչապատել:”
>
> **1in.am** / *«Ո՞ւր էիք ապրիլի 9-ին». Արմեն Մարտիրոսյանն Արաբկիրում դիմեց Ռաֆֆի Հովհաննիսյանին չմիացած քաղաքական ուժերին* / Հեղինակ. թեկնածու, «Բարև Երևան» դաշինք, ապրիլ 18

Ինչպես տեսնում ենք, կուսակցությունների ծրագրերի ներկայացումը ընդգրկում է մի շարք, հիմնականում ընդհանուր բնույթի կետեր, բայց դրանցում տեղ չի գտել գաղափարախոսությունը:

Այս պնդումը առավել ակնհայտ է դառնում ՀՅԴ-ին անդրադառնալիս: Այն առաջին հերթին հայտնի է որպես գաղափարական կուսակցություն՝ ի տարբերություն Հայաստանի քաղաքական կյանքում գործող բոլոր մյուս կուսակցությունների:

> “...Հայաստանում միակ գաղափարական ուժը ՀՅԴ-ն է”
>
> **News.am** / Հայաստանում միակ գաղափարական ուժը ՀՅԴ-ն է. Վարդան Բոստանջյան / հեղինակ. հրապարակային գործիչ, ապրիլ 26

Այնուհանդերձ, առաջարկվող ծրագրի միջոցով լուծվելիք քաղաքի խնդիրների մասին խոսելիս, նրանք ոչինչ չեն հիշատակում իրենց գաղափարական տեսակետների մասին: Դրա փոխարեն խոսվում է քաղաքապետարանում բարեփոխումներ կատարելու և քաղաքում առկա լուծման սպասող այլ հարցերի մասին:

> “...ՀՅԴ–ի՝ Երևանում իշխանության գալու առաջին քայլը կլինի այն, որ ռաբիզներն ու անգրագետները կվռնդվեն քաղաքի իշխանությունից, և այն բոլոր օղակները, որոնք դադարել են ծառայել երևանցուն, այդ բոլոր տեղերում լուրջ լվացք է սպասվում”
>
> **Tert.am** / *Մեզ դուք դեռ չեք փորձել. Վահան Հովհաննիսյանը ասաց, թե ինչու պետք է ընտրել ՀՅԴ-ին* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀՅԴ,

Կարելի է ենթադրել, որ գաղափարախոսական հարթությունը չի շոշափվել ընտրապայքարում, որովհետև այս ընտրությունները իրենց բնույթով քաղաքական չէին և ընտրվում էր պարզապես՝ քաղաքի ավագանի: Սակայն ինչպես արդեն նշեցինք, ընդդիմադիր կուսակցությունները, այդ թվում և ՀՅԴ-ն, ամեն կերպ ձգտում էին ապացուցել հակառակը:

Ըստ երևույթին, այս միտումը ցույց է տալիս կուսակցությունների կողմից այն փաստի գիտակցումը, որ ընտրողին այժմ հետաքրքրում է ոչ թե

գաղափարախոսությունը, այլ կոնկրետ խոստումները և այս կամ այն թեկնածուին աջակցելու միջոցով իր համար ձեռք բերվելիք լծակները:

Սա դեռ չի նշանակում, որ կուսակցությունները հրաժարվել են իրենց գաղափարախոսություններից: Եվ հնարավոր է, որ ընտրազանգածի հետ հանդիպումներում կուսակցությունների անդամները կամ թեկնածուներն իրոք խոսել են գաղափարների մասին: Սակայն եթե այդպիսի դեպքեր տեղի ունեցել են, ապա ամենայն հավանականությամբ համեմատաբար քիչ թվով, չեն գրավել ԶԼՄ-ների ուշադրությունը և հաստատապես չեն արտացոլվել ընտրապայքարի լուսաբանման մեջ: Սա առնվազն նշանակում է, որ ընթերցողն այլևս հետաքրքրություն չի ցուցաբերում գաղափարական դիսկուրսների նկատմամբ:

Մեղավորը ՀՀԿ-ն է

Ընտրապայքարի ընթացքում դրսևորված չափազանց հզոր և տարածում գտած միտումներից մեկը իշխող Հանրապետական կուսակցության անխնա քննադատությունն էր: Առանց որևէ թիվ վկայակոչելու էլ ակնհայտ է, որ այս ընտրապայքարում ամենից շատ ՀՀԿ-ն էր գտնվում իր հակառակորդների ուշադրության կենտրոնում, ընդ որում, այդ ուշադրությունը հիմնականում բացասական էր:

Մրցակից կուսակցությունները հավանաբար փորձում էին գրավել ընտրողների ուշադրությունը և իրենց համար ձայներ ապահովել ՀՀԿ-ին մեղադրանքներ ներկայացնելու միջոցով: Ընդհանուր առմամբ, նրանք ՀՀԿ-ին և նրա անդամներին մեղադրում էին վերջին տասնամյակում և դրանից ավելի վաղ Հայաստանում պատահած բոլոր դժբախտությունների համար: Քանի որ Հանրապետականները Հայաստանում պետական քաղաքականության հիմնական ձևավորողներն են եղել, ընդդիմադիր կուսակցությունների պնդմամբ նրանց վարած քաղաքականությունն է, որ երկիրը հասցրել է անմխիթար սոցիալ-տնտեսական վիճակի: Սա նաև սերտորեն փոխկապակցված է քաղաքական մենաշնորհի մասին վերոգրյալ քննարկումներին:

> “...Շատ ճիշտ ընտրված մարտավարություն է. հասցնել այնպիսի վատ վիճակի, որ նա, օրվա հացից բացի, ուրիշ ոչ մի բանի մասին չմտածի ...”
>
> **1in.am** / *Քաղաքացու միակ մտածմունքն օրվա հացի խնդիրը լուծելն է դարձել* / Հեղինակ. թեկնածու, ԲՀԿ, ապրիլ 25

Իր հերթին, դա բերում է արտագաղթի, որը ևս մեկն է այն հիմնախնդիրներից, ինչում ՀՀԿ-ին հաճախ են մեղադրում։

> “...Հանրապետականը մոռանալով գաղափարախոսությունը՝ ոչ միայն շեղվեց իր ծրագրերից, այլ ամեն ինչ անում է, կարծես, հայաթափելու համար։ Չեմ կարող ՀՀԿ-ին չհիշեցնել այն մասին, թե ժողովրդի մեջ ինչքան մեծ հիասթափություն կա իշխանություններից, որը ձուլվել է ՀՀԿ-ի հետ, և Խորհրդային տարիների կուսակցական նշանը նույնացվում է ՀՀԿ-ի նշանի հետ ...”
>
> **Tert.am** / *Անահիտ Բախշյանը խնդրեց ձայն տալ իրական ընդդիմադիր քաղաքական ուժերին* / Հեղինակ. թեկնածու, «Բարև Երևան» դաշինք,

Ուշագրավ է, որ թեպետև ընդգրկված լինելով իշխանական կոալիցիայում, «Օրինաց երկիր» կուսակցությունը ավելի մեղմ և հազվադեպ քննադատության էր ենթարկվում, համենայն դեպս՝ ՀՀԿ-ի համեմատ։ Այս հանգամանքը հուշում է, որ ՕԵԿ-ը որպես առանձին կուսակցություն լուրջ չի ընկալվում մյուս ուժերի կողմից և մեծամասամբ դիտվում է որպես Հանրապետականի կցորդ։ Հնչած քննադատությունների գերակշիռ մասը վերաբերում էր կուսակցության ղեկավարի կողմից հնչեցված ամբոխավարական հայտարարություններին։

> “...Չեմ էլ ասում, որ նա սովորական տղամարդկային ձեռքսեղմումը չի տարբերում, Աստված իր հետ, նա ցույց տվեց իր կուլտուրան։”
>
> **News.am** / *Արմեն Մարտիրոսյանը՝ Արմեն Երիցյանի մասին. Նա դիմում է նողկալի մեթոդների* / Հեղինակ. թեկնածու, «Բարև Երևան», ապրիլ 27

ՕԵԿ-ը ձեռնպահ մնաց իր գործընկերներին խիստ քննադատելուց, հայտարարելով, որ թեև հարգում են ՀՀԿ-ին որպես կուսակցություն, բայց իրենք շատ ավելի շատ բան ունեն առաջարկելու ընտրողներին:

> “...Տարոն Մարգարյանը իմ ընկերն է, բայց մենք առաջարկում ենք ավելին, առաջարկում ենք մեր ծրագրերը:”
>
> **Slaq.am** / *Կարծում եմ Ձեզ վրա ջեմ բաժանողի տպավորություն չեմ թողել* / Հեղինակ. թեկնածու, ՕԵԿ, ապրիլ 8

Լրագրողները քաղաքացիներին ևս չզրկեցին ՀՀԿ-ի և նրա վարած քաղաքականության մասին իրենց տեսակետները արտահայտելու հնարավորությունից: Մարդկանց վերաբերմունքը ՀՀԿ-ի հանդեպ նույնպես հիմնականում բավականին բացասական էր: Ընդհանուր առմամբ, նրանք ՀՀԿ-ին համարում են կուսակցություն, որը հազվադեպ է իր խոստումները կատարում: Ահա թե ինչու են մարդիկ այդքան խոր հիասթափություն ապրում և գերադասում լքել երկիրը ավելի լավ կյանք փնտրելու համար:

> “...Ժողովուրդը դժգոհ է, ժողովրդի մեծ մասը հոգնել է ստախոսությունից, խաբեությունից: Այդքան խաբել ժողովրդին չի կարելի, բոլորը արտագաղթում են”
>
> **1in.am** / *Հայաստանում տղամարդ չկա* / Հեղինակ. քաղաքացի, ապրիլ 9

Այս և բազմաթիվ այլ մեջբերումներ կարելի է գտնել մեր տվյալների բազայում, որոնք ցույց են տալիս, թե որքան ուշադրություն էին ԶԼՄ-ները դարձնում ՀՀԿ-ին ուղղված քննադատությունը լուսաբանելուն և հնչեցնելուն:

Ինքը՝ ՀՀԿ-ն, անշուշտ չի ընդունում այս կարգի մեղադրանքները, պնդելով որ կատարել է իր տված խոստումների մեծ մասը և շարունակելու է աշխատել ու իրականացնել իր առջև դրված նպատակները:

> “...Մենք այսօր էլ բաց ճակատով ժողովրդի առաջ կանգնում ենք այդ ամբողջ թիմով, որն աշխատել է այս տարիների ընթացքում Երևանի քաղաքապետարանում, թե՛ որպես քաղաքապետ և թե՛ որպես ավագանի, և պարզերես ենք, ու կարող ենք ասել, որ այս տարիների ընթացքում ինչքան գործ է արվել, իսկ արվել են բավականին շատ գործեր, քաղաքի դեմքը էականորեն ու լրջորեն փոխված է, և մեր քաղաքապետերից յուրաքանչյուրը դրական հետք է թողել։”
>
> **News.am** / *Հերմինե Նադդալյանը Աղվան Վարդանյանին հիշեցնում է ՀՀԿ քվոտայով նախարար աշխատելու մասին* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀՀԿ, ապրիլ 22

Ընդդիմությունը

Ընդդիմության և ՀՀԿ-ի նկատմամբ նրա վերաբերմունքի մասին արդեն խոսվեց։ Զեկույցի այս բաժնում կներկայացվեն ընդդիմադիր կուսակցությունների առանձնահատկությունները և նրանց միջև փոխհարաբերությունները։

Նախքան ընտրարշավը և դրա ընթացքում գլխավոր հարցը կայանում էր նրանում, թե կմիավորվի՞ արդյոք ընդդիմությունը։ Կոալիցիա կազմելու բազմաթիվ հնարավոր տարբերակներ հնչեցին։ Սակայն դրանք բոլորը պտտվում էին երկու կուսակցությունների շուրջ՝ ԲՀԿ և «Բարև Երևան» կուսակցությունների դաշինք։

Քարոզարշավի մեկնարկից հաշված շաբաթներ առաջ «Բարև Երևան» դաշինքի առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը նախագահական ընտրություններում հավաքել էր ձայների գրեթե 37%-ը[17], ինչը նրան առջևի ասպարեզ մղեց քաղաքի ավագանու համար ընտրապայքարի առաջին օրերին։ Շատերի կողմից «Բարև Երևան» դաշինքը դիտվում էր որպես քաղաքական ուժ, որն այս ընտրություններում ի վիճակի է միավորել և առաջնորդել ընդդիմությունը։ Իսկապես, կուսակցությունը ընտրապայքարը սկսեց բարձր նոտայով, որը սակայն շուտով աստիճանաբար մարեց։ ԶԼՄ-ներում այս առթիվ տարբեր պատճառաբանություններ բերվեցին։ «Բարև Երևան»-ի անդամները հիմնականում պնդում էին, որ մյուս կուսակցությունները «լքեցին» իրենց։

[17] ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով / 2013թ. ՀՀ Նախագահի ընտրությունների քվեարկության արդյունքներ, URL: [http://www.elections.am/presidential/election-25547/]

> “...Ինչո՞ւ որևէ մեկդ չաջակցեցիք, չէ՞ որ իշխանության դեմ էր պայքարում: Եթե դուք իսկապես պայքարում եք իշխանությունների դեմ բարեփոխումների համար, ո՞ւր էիք փետրվարի 18-ին, ո՞ւր էիք ապրիլի 9-ին, չկայիք, մեր կողքին չէիք, ժողովրդի կողքին չէիք....”
>
> **1in.am** / *«Ո՞ւր էիք ապրիլի 9-ին». Արմեն Մարտիրոսյանն Արաբկիրում դիմեց Ռաֆֆի Հովհաննիսյանին չմիացած քաղաքական ուժերին* / Հեղինակ. թեկնածու, «Բարև Երևան» դաշինք, ապրիլ 18

Մյուս ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները տալիս էին «Բարև Երևան»-ին չմիանալու իրենց պատճառաբանությունները: Ըստ նրանց, ապրիլի 9-ի դեպքերը հստակորեն ցույց տվեցին, որ Ռաֆֆի Հովհաննիսյանը անկարող է առաջնորդել ընդդիմությունը, որովհետև այդ ժամանակաշրջանում նրա կայացրած որոշումներում զգացվում էր տրամաբանության և հետևողականության պակաս:

> “...Ռաֆֆին վերածվեց խեղկատակության, նրանից ընդդիմության առաջնորդ կերտելն անհնար է, չի կարող ժողովրդական ալիք կրել, ի վիճակի չէ...”
>
> **1in.am** / *Ռաֆֆին վերածվեց խեղկատակության* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀԱԿ, ապրիլ 13

Ուշագրավ է, որ «Բարև Երևան»-ը միակ ընդդիմադիր ուժն էր, որ քննադատության ենթարկվեց ԲՀԿ-ի կողմից: Սա արժանահիշատակ իրողություն է, քանի որ ինչպես արդեն նշվեց, ԲՀԿ-ն ընտրել էր հնարավոր դաշնակիցներին չքննադատելու ընդհանուր ռազմավարություն: «Բարև Երևան»-ի հետ կապված ԲՀԿ-ի անդամները մատնանշում էին Ռաֆֆի Հովհաննիսյանի քաղաքական գիծը:

> “...Ցավալի է, որ նա այդքան անլուրջ մարդ դուրս եկավ, ով իրեն թույլ է տալիս անհիմն հայտարարություններ անել: ...”
>
> **News.am** / *«Բարգավաճ Հայաստանի» ներկայացուցիչ. «Ժառանգությունում» փորձում են իրենց ձախողման մեղքը բարդել ուրիշների վրա* / *Հեղինակ.*: քաղաքական գործիչ, ԲՀԿ, մայիս 1

Հանրությունը և լրագրողները նույնպես իրենց հիասթափությունը արտահայտեցին Ռաֆֆի Հովհաննիսյանի գործողությունների առթիվ, նշելով, որ դրանք ի չիք դարձրեցին հասարակությունը միավորելու հնարավորությունը, որն առաջացել էր պակաս քան մեկ ամիս առաջ այդքան ձայն հավաքելուց հետո:

> “...Նրա գործողությունները կարելի է զետեղել «Խենթից մինչև խենթություն» աշխատության մեջ ...”
>
> **Asekose.am** / *Ռաֆֆի Հովհաննիսյանի գործողությունները պետք է զետեղել «Խենթից մինչև խենթություն» աշխատության մեջ* / Հեղինակ. փորձագետ, ապրիլ 10

Սակայն ընդդիմության առաջնորդ դառնալու «Բարև Երևանի» շանսերը, ըստ երևույթին, վերջնականապես փլվեցին ՀՅԴ-ի հետ գժտությունից հետո: Սկզբնապես կուսակցությունը աջակից էր Ռաֆֆի Հովհաննիսյանի նախաձեռնությանը, բայց հետո նրանց ուղիները բաժանվեցին:

Դաշնակցականները Ռաֆֆի Հովհաննիսյանին հիմնականում մեղադրում էին իր անձնական եսը ընդհանուրի շահից բարձր դասելու և շարժումը անձամբ չգլխավորելու մեջ (ինչպես գիտենք, «Բարև Երևան»-ի կողմից որպես քաղաքապետի թեկնածու առաջադրվել էր Արմեն Մարտիրոսյանը), քանի որ նրա տեսանկյունից նախագահական ընտրություններում «հաղթանակ տանելուց» հետո քաղաքապետ դառնալու մասին մտածելն անգամ ետքայլ կլիներ:

> “...«Ժառանգության» առաջնորդը չցանկանալով գլխավորել միասնական ցուցակը տապալեց այդ պրոցեսը ...”
>
> **Slaq.am** / *Ինչ է առաջարկում ՀՅԴ-ն՝ ընդդիմությանը* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀՅԴ, ապրիլ 12

Ընդդիմության առաջնորդի դերին հավակնող երկրորդ թեկնածուն, ԲՀԿ-ն, բավականին նուրբ իրավիճակում էր հայտնվել: 2012թ.-ի խորհրդարանական ընտրություններում ԲՀԿ-ն գրանցեց իր առաջին խոշոր քաղաքական նվաճումը, հավաքելով մոտ կես միլիոն քվե[18]: Այնուամենայնիվ, կուսակցության ղեկավար

[18] Տես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների արդյունքների վերջնական արձանագրություն, 6 մայիսի 2012թ. Parliamentary Elections Results at Central Electoral Commition official website, 13 May 2013, URL: [http://res.elections.am/images/doc/060512v.pdf], (in Armenian)

Գագիկ Ծառուկյանը որոշեց չմասնակցել 2013թ.-ի նախագահական ընտրություններին: Թեև սա վնաս հասցրեց կուսակցության հեղինակությանը, ԲՀԿ-ն շարունակում էր համարվել Երևանի ավագանու ընտրություններում լուրջ հավակնորդներից մեկը:

Ընտրապայքարի ընթացքում ԲՀԿ-ն իրեն պահում էր որպես ընդդիմության հնարավոր առաջնորդ: Նախ, ինչպես նշեցինք, ընտրարշավի ողջ ընթացքում ԲՀԿ-ի անդամները և որպես քաղաքապետի թեկնածու առաջադրված Վարդան Օսկանյանը կոշտ քննադատության էին ենթարկում իշխանություններին, մեղադրելով նրանց մենաշնորհի ստեղծելու, անմխիթար սոցիալ-տնտեսական իրավիճակի և արտագաղթի համար: Նրանք ջանք չէին խնայում իշխանություններից իրենց տարանջատելու համար, չնայած անցյալում ունեցած համատեղ պատմությանը:

> “...ԲՀԿ-ն մաս չէ իշխանական կոալիցիայի եւ դրանով ամեն ինչ ասված է...”
>
> **News.am** / *ԲՀԿ-ն մաս չէ իշխանական կոալիցիայի եւ դրանով ամեն ինչ ասված է. Նաիրա Զոհրաբյան* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ԲՀԿ, ապրիլ 22

Ընդդիմադիր կուսակցությունները տարբեր կերպով արձագանքնեցին այս հայտարարություններին և ԲՀԿ-ի ընդհանուր քաղաքական գծին: Մի կողմից, ՀԱԿ-ը և ՀՅԴ-ն մեծ աջակցություն էին ցուցաբերում ԲՀԿ-ին[19]: Ավելին ՀԱԿ-ի և ԲՀԿ-ի միջև հնարավոր դաշինքը ամենաշատ արծարծվող վարկածն էր: Թեև նրանց միջև կոալիցիա այդպես էլ չկազմավորվեց, բայց կուսակցությունների ներկայացուցիչները տարբեր առիթներով հանդես եկան հայտարարություններով, որ պատրաստ են միասին աշխատել Երևանի ավագանում[20]: Սակայն ՀԱԿ-ը բավականաչափ ձայներ չհավաքեց[21]:

[19] «Քայլն արված է». ՀՅԴ-ն և ԲՀԿ-ն ՀԱԿ-ի համագումարում են, 13 ապրիլի 2013թ., URL: [http://www.panorama.am/am/popular/2013/04/13/congress/]

[20] «ԲՀԿ-ն բանակցում է ՀՅԴ-ի և ՀԱԿ-ի հետ», 26 ապրիլի 2013թ., URL: [http://hayeli.am/բհկ-ն-բանակցում-է-հյդ-ի-և-հակ-ի-հետ/]

[21] Տես՝ 2013թ. մայիսի 5-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների վերջնական արձանագրություն, ԿԸՀ պաշտոնական կայք, 12.05.2013, URL: [http://res.elections.am/images/doc/05.05.13v.pdf]

> “...նա, մասնավորապես գոհունակություն հայտնեց Գագիկ Ծառուկյանի՝ իշխանություններից արդեն երկու տարի շարունակվող «անկախ քաղաքականություն» վարելու կապակցությամբ...”
>
> **Tert.am** / *Լ. Տեր-Պետրոսյանը Ծառուկյանին համեմատեց Սուքիասյանի հետ* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀԱԿ, ապրիլ 13

Դրան հակառակ, «Բարև Երևան»-ը խանդավառված չէր ընդդիմության առաջնորդի դերը ԲՀԿ-ին թողելու հեռանկարով: Կուսակցության անդամները ԲՀԿ-ին լավագույն դեպքում համարում էին կիսա-ընդդիմություն, քանի որ ոչ այնքան վաղ անցյալում ԲՀԿ-ն եղել էր իշխող կոալիցիայի անդամ, աշխատել էր ՀՀԿ-ի և ՕԵԿ-ի հետ, ունեցել էր նախարարական պորտֆելներ և այլն:

> “...Զգոն եղեք եւ մի մոռացեք, թե ինչ են իրենցից ներկայացնում այդ կուսակցությունները, հատկապես ԲՀԿ-ն, որը իշխող հանրապետական կուսակցության սիամական երկվորյակն է...”
>
> **News.am** / *«Ժառանգություն». Ժողովուրդն իր ձեռքը կվերցնի իշխանությունը Երևանում* / Հեղինակ. քաղաքական գործիչ, «Բարև Երևան» դաշինք, ապրիլ 17

Ինչպես նշվեց սույն հաշվետվության նախորդ մասում, ընտրապայքարի ժամանակ բոլոր ընդդիմադիր ուժերը քննադատել են ՀՀԿ-ին: Բնականաբար, ՀՀԿ-ն նրանց հակադարձել է: Յուրաքանչյուր կուսակցությանը առանձին անդրադառնալուց բացի, ՀՀԿ անդամներն ու ներկայացուցիչները նաև նշում էին, որ առհասարակ, ընդդիմությունը անկազմակերպ է և նրանց հիմնական թերությունը միավորվելու անընդունակությունն է: ՀՀԿ-ի խոսնակները նաև շեշտում էին, որ ընդդիմության ողջ քարոզարշավը, ըստ էության, իրենից ներկայացնում է ՀՀԿ-ին և նրա վերջին տարիների կատարած աշխատանքը սևացնելու միջոցով ընտրողների քվեները շահելու փորձ:

> “...ընդդիմադիր ուժերը փորձում են իրար միս ուտել՝ նպատակ ունենալով ավելի շատ ձայն հավաքել Երևանի ավագանու ընտրություններում՝ խտրականություն չդնելով պայքարի միջոցների միջև...”
>
> **News.am** / *Ընդդիմության գլխավոր խնդիրը նրա պառակտվածությունն է* / Հեղինակ: քաղաքական գործիչ, ՀՀԿ, ապրիլ 19

> “...Որոշ քաղաքական ուժեր այս ընթացքում պատռեցին իրենց՝ հերթական անգամ փորձելով խաղեր տալ, ամենաընդդիմադիրներից մինչև այլընտրանք ներկայանալ, իշխանությանը հայհոյել, մեր քաղաքացու հաշվին իրենց քաղաքական չեղած կամ վարկաբեկված կշիռը բաձրացնել, հայհոյել, բամբասել, այլ ուժերի ոտնահարել և իրենց չարած գործերը փառաբանել...”
>
> **Asekose.am** / *Կարեն Ավագյան. ԲՀԿ-ն ու ՀԱԿ-ը երկնքից աստղեր են խոստանում* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀՀԿ, ապրիլ 29

Ընդհանուր առմամբ, հանրությունը կարծես թե նույնպես մեծ հույսեր չէր կապում ընդդիմության հետ: Քարոզարշավը կոչում էին կանխատեսելի, կիրառված մեթոդները՝ անբավարար, իսկ ընտրողներին միավորելու անկարողությունը՝ աղետաբեր:

> “...Ինչպես և սպասվում էր, քաղաքական ուժերն իրենց հիմնական մարտավարությունը կառուցել են գործող քաղաքապետի և ՀՀԿ-ի դեմ կոշտ քննադատության վրա: ...”
>
> **Asekose.am** / *Պայքարը քաղաքապետի պաշտոնի համար չէ. քաղաքական փորձագետ* / Հեղինակ. փորձագետ, ապրիլ 16

Արժեքներ

ԶԼՄ-ներում Երևանի ավագանու ընտրարշավի լուսաբանման մշտադիտարկման արդյունքների սույն զեկույցի այս վերջին մասում ներկայացվում են մասնակից կուսակցությունների կրած արժեքների մասին տեղեկություններ:

Հավասարաչափ զարգացում

«Հավասարաչափ զարգացման» գաղափարը, թերևս, ամենատարածվածն էր այս ընտրություններում: Գրեթե բոլոր կուսակցությունները այս կամ այն չափով անդրադարձան այս հիմնախնդրին: Ավելի կոնկրետ, նրանք նշում էին, որ Երևանի մասին՝ որպես գեղեցիկ քաղաք և մայրաքաղաք պատկերացումները չպետք է սահմանափակվեն քաղաքի կենտրոնով և շեշտում էին թաղամասերի զուգահեռ զարգացման կարևորությունը: Դա էլ հենց նրանց կողմից տրվող հիմնական, թեպետև բավականին վերացական խոստումների առարկան դարձավ:

> “...Երևանի հավասար և ամբողջական զարգացումն իսկապես այսօր քաղաքի առաջնային խնդիրներից մեկն է, և դրա իրականացման քաղաքականությունը ոչ թե պետք է լինի այն, ինչ առ այսօր եղել է՝ Կենտրոնից դեպի ծայրամասեր, այլ արդեն ճիշտ հակառակը՝ ծայրամասերից դեպի Կենտրոն:...”
>
> **1in.am** / *Խնդիրների առկայությունը քաղաքային իշխանությունների՝ տարիների անտարբերության արդյունքն է. Օսկանյան* / Հեղինակ. թեկնածու, ԲՀԿ, ապրիլ 15

«Հավասարաչափ զարգացման» հայեցակարգի հետ կապված հիմնախնդիրը դրա չափազանց անորոշ լինելն է: Որպես արժեք այն ինքնին գրավիչ է, սակայն դա մեկնաբանելու և նման զարգացում ապահովելու տարբեր եղանակներ կան: Ընտրողի համար կարևոր է հասկանալ, թե հավասարաչափ զարգացման ո՞ր տարբերակի համար է ինքը քվեարկում: Սա էական հարց է, քանի որ առանց մանրամասներին ծանոթանալու դժվար է ընտրություն կատարել: Ցավոք սրտի, կուսակցություններից միայն երկուսը մանրամասնեցին, թե ինչպես են պատկերացնում հավասարաչափ զարգացումը:

Առաջին դեպքում առաջարկվեց, այսպես կոչված, քաղաքի բաժանումը երկու մասի, որն աշխարհում տարածված մոդել է: Դրա համաձայն, կենտրոնը ծառայում է որպես գործարար ուղղվածությամբ տարածք, իսկ մնացած թաղամասերում բնակիչների համար ապահովում են բնակության լավ պայմաններ:

> “...Երևանի փոքր կենտրոնը պետք է լինի ավելի շատ բիզնես կենտրոն, իսկ դրան շրջապատող ու կից շրջանները՝ բնակվելու համար ...”
>
> **News.am** / *Երևանի փոքր կենտրոնը պետք է լինի ավելի շատ բիզնես կենտրոն, իսկ մնացած շրջանները՝ բնակվելու համար* / Հեղինակ. թեկնածու, ՀՀԿ, ապրիլ. 17

Մեկ այլ թեկնածու նշեց վարչական կառուցվածքների դիվերսիֆիկացումը դրանց տեղաբաշխման առումով: Թեկնածուի կարծիքով, դրանց տեղափոխումը կենտրոնից դեպի այլ թաղամասեր կարող է վերջիններիս բնակիչների համար աշխատատեղերի նոր հնարավորություններ ստեղծել:

> “...Ինչպես մյուս վարչական շրջաններում, այնպես էլ Շենգավիթում պետք է այնպես լինի, որ լինեն նախարարություններ եւ գերատեսչություններ, որ մարդիկ աշխատատեղեր ունենան...”
>
> **News.am** / *Շենգավիթում Արմեն Երիցյանին ներկայացրեցին որպես ապագա քաղաքապետ* / Հեղինակ. թեկնածու, ՕԵԿ, ապրիլ 13

Այս փոքրաքանակ, բայց կարևոր մանրամասներին տեղյակ լինելը ընտրողին օգնում է կատարել իր ընտրությունը: Ոմանք կարող են համաձայնվել, որ քաղաքի կենտրոնը պետք է գործարար նպատակների ծառայի, իսկ բնակվել ավելի հարմար է ծայրամասերում: Նման կարծիք ունենալու իրավունքը հարգելով հանդերձ, մյուսները կարող են չհամաձայնվել: Երկրորդ դեպքում, բնակչության մի մասը կարող է մտածել, որ երկիրը կառավարող վարչակազմը հիմնականում պետք է գտնվի քաղաքի մեկ մասում, ոչ թե՝ ցրված լինի տարբեր թաղամասերով մեկ և այլն:

Քաղաքի իմիջը

Ինչպես պատահում է քաղաքաշինության շուրջ ծավալվող ցանկացած բանավեճում, Երևանի դեպքում էլ քաղաքի իմիջի խնդիրը ունի իր ուրույն տեղը: Այստեղ քննարկումների շրջանակը չափազանց լայն էր և ընդգրկում էր տարբեր հարցեր: Որոշ կուսակցություններ ընտրողի ուշադրությունը հրավիրում էին նույն խնդիրներին, իսկ մյուսները խոսում էին պակաս ժողովրդականություն վայելող թեմաների մասին:

ՀՀԿ-ն նշեց Երևանի պատմական թաղամասերի պահպանման նշանակությունը, միաժամանակ կարևորելով քաղաքի ընդհանուր կառուցապատման շարունակումը:

> “...Նոր մայրաքաղաքի կառուցումն առանց հնի պահպանման անհնար է:”
>
> **News.am** / *Տարոն Մարգարյան. Մենք չենք կառուցելու նոր Երևան առանց հնի պահպանման* / Հեղինակ. թեկնածու, ՀՀԿ, ապրիլ 11

Լայն քննարկման արժանացած հարցերից մյուսը մայրաքաղաքի կանաչ տարածքների խնդիրն էր: Բոլոր կուսակցությունները համամիտ էին, որ դրանք կենսական անհրաժեշտություն են և խոստանում էին քայլեր ձեռնարկել դրանց մակերեսը ընդլայնելու ուղղությամբ: Ստորև բերված են մի քանի ակնառու օրինակներ:

> “...կանաչի համար միշտ հնարավոր է հող գտնել, եթե ցանկություն կա:”
>
> **News.am** / *Առանձին ծառատունկ անելով Երևանը չի կարելի փրկել, լուծումը՝ մասսայական անտառաշերտեր տնկելն է* / Հեղինակ. թեկնածու, ՀԱԿ, ապրիլ 16

> “...Երևանը մեր ընդհանուր տունն է, և մենք պարտավոր ենք հոգ տանել նրա բարեկարգ լինելու համար: Կանաչապատումը քաղաքի անբաժանելի մասերից մեկն է:”
>
> **News.am** / *Երևանը կրկին կանաչ քաղաք կդառնա. Տարոն Մարգարյան* / Հեղինակ. թեկնածու, ՀՀԿ, ապրիլ 20

Քաղաքի արտաքին տեսքի մասին խոսելիս, «Առաքելությունը» առավելապես ընդհանուր բնույթի գաղափարներ էր առաջ քաշում: Նրա առաջարկության էությունն էր Երևանը եվրոպական տիպի մայրաքաղաք դարձնելը :

> “...Ինչ վերաբերում է մայրաքաղաքին, ապա «Առաքելությունը» ցանկանում է այն վերածել եվրոպական չափանիշներով քաղաքի, որն առաջին հերթին գեղեցիկ ու անվտանգ կլինի հենց երևանցիների համար.”
>
> **News.am** / *«Առաքելությունն» աստիճանաբար կամրապնդի իր դիրքերը. Մեսրոպ Առաքելյան* / Հեղինակ. թեկնածու, «Առաքելություն» կուսակցություն, ապրիլ 19

Առհասարակ, քաղաքի իմիջի մասին քննարկումները բավականին ընդհանուր բնույթ էին կրում: Կուսակցությունների մեծ մասը մտահոգված էր Երևանի արտաքին տեսքի հարցով: Նրանք կարևորում էին Երևանը ներկայացուցչական տեսք ունեցող քաղաքի վերածելը: Իմիջի հետ մեկտեղ, նրանք նաև շեշտում էին քաղաքաբնակների համար քաղաքը հարմարավետ դարձնելու կարևորությունը: Հենց այս քննարկումներում էր հաճախ ի հայտ գալիս կանաչ տարածքների հարցը: Երևանի շարունակական զարգացման խնդիրը նույնպես հաճախակի էր մատնանշվում՝ որպես առաջնահերթություն:

Ենթակառուցվածքներ

Կուսակցությունները ընդունում էին, որ Երևանը լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ ունի: Նրանց մեծամասնության կարծիքով՝ ենթակառուցվածքը առավել հրատապներից է: Այս առթիվ տարբեր խոստումներ հնչեցին, ամենաընդհանուրից՝ մինչև առավել առարկայական:

Ուշագրավ է, որ ենթակառուցվածքների հարցում ամենաակտիվներից մեկը նորահայտ «Առաքելություն» կուսակցությունն էր: Նրանք բարեփոխումների վերաբերյալ ամենատարբեր առաջարկություններ ներկայացրեցին: Մասնավորապես, կուսակցությունը կողմնակից էր քաղաքի տաքսիների ցանցը Երևանի քաղաքապետարանի անմիջական հսկողության տակ դնելուն, ինչպես նաև հանդես եկավ մետրոյի ուղեվարձը կրկին 50 դրամ դարձնելու նախաձեռնությամբ:

> “...դա թույլ կտա մետրոյի ուղեվարձը կրկին դարձնել 50 դրամ, ուսանողներին, թոշակառուներին եւ դպրոցականներին անվճար երթևեկելու հնարավորություն տալ”
>
> **News.am** / *Եկամուտների զրագետ մենեջմենթը Երևանի բյուջեն կլրացնի 9 մլրդ դրամով* / Հեղինակ. թեկնածու, «Առաքելություն», ապրիլ 13

Իր հերթին ՀՀԿ-ն նույնպես հաստատում էր մայրաքաղաքում զարգացած ենթակառուցվածք ունենալու անհրաժեշտությունը, մասնավորապես՝ միկրոավտոբուսները ավտոբուսներով փոխարինելու և մետրոյի նոր կայարաններ կառուցելու կարիքը:

> “...ավտոբուսներով երթուղայինների աստիճանաբար փոխարի-նումից բացի, լուրջ քննարկումներ են գնում մետրոյի կանգառների ավելացման հարցի շուրջ:”
>
> **Tert.am** / *Երևանի ավագանու ընտրությունները ոչ թե քաղաքական, այլ քաղաքային ընտրություններ են* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀՀԿ, ապրիլ 16

«Բնիկ երևանցի»

Մշտադիտարկումը ցույց տվեց, որ քաղաքական կուսակցությունները ամենատարբեր քաղաքական տեխնոլոգիաներ են կիրառում իրենց քարոզարշավներում: Տեխնոլոգիաների այս զինանոցում տեղ էին գտել պարզագույններից (ինչպես օրինակ՝ կուսակցական խորհրդանշաններով շապիկներ ու գլխարկներ բաժանելը) մինչև առավել կատարելագործվածները, ինչպես նաև որոշ խնդրահարույցները, ինչպես օրինակ՝ ՕԵԿ-ի դեպքում: Վերջինս իր քարոզարշավը սկսեց որպես թեկնածու առաջադրելով ներկայումս Արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնը զբաղեցնող Արմեն Երիցյանին[22], ընդ որում, շեշտելով, որ իրենց թեկնածուն լավագույնն է թեկուզ միայն այն պատճառով, որ ծնվել ու մեծացել է Երևանում: Կուսակցության տեսանկյունից, այս հանգամանքը իրենց թեկնածուին

[22] ՀՀ Կառավարության համացանցային կայք, Արտակարգ իրավիճակների նախարարություն, URL: [http://www.gov.am/en/structure/133/]

առավելություն էր տալիս մյուսների նկատմամբ, քանի որ նա ավելի քաջատեղյակ էր քաղաքի խնդիրներին:

> “...Մենք առաջադրել ենք երևանցի թեկնածուի, ինչը շատ կարևոր է, քանի որ նա պետք է ծանոթ լինի գրված և չգրված օրենքներին”
>
> **1in.am** / *ՕԵԿ-ը առաջադրել է երևանցի թեկնածուի, որպեսզի նա ծանոթ լինի գրված և չգրված օրենքներին*/ Հեղինակ. քաղաքական գործիչ, ՕԵԿ, ապրիլ.7

Այս հռետորաբանությունը հետագայում զարգացրեց ինքը՝ թեկնածուն: Մշտադիտարկման հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում քարոզարշավի այս գործիքը վերաճեց քաղաքական ամբոխավարության մի ձևի: Պարզ ասած, պրն. Երիցյանը փորձում էր շահարկել «բնիկ երևանցիների» բացասական վերաբերմունքը երկրի այլ վայրերից Երևան տեղափոխված հայաստանցիների նկատմամբ:

> “...Գիտե՞ս ինչ, տղա ջան, եթե եկել ես մեզ մոտ, դարձել երևանցի, ապրի մեր Երևանի կյանքով, այլ ոչ թե արի այստեղ լկտիությամբ զբաղվի, մեր աղջիկների հետևից ռեպլիկներ թող.”
>
> **News.am** / *Արմեն Երիցյան. Ժամանակն է, որ լկտիների ականջները քաշենք* / Հեղինակ. թեկնածու, ՕԵԿ, ապրիլ 23

ՕԵԿ-ի թեկնածուն ակնարկում էր, որ երևանցիները կորցրել են իրենց երբեմնի դիրքերը և ժամանակն է վերականգնել դրանք:

> “...Հիմա այդքան էլ մոդայիկ չէ երևանցի լինելը, բայց մենք պետք է վերականգնենք մեր ավանդույթները, ասենք մենք երևանցի ենք և հպարտ ենք:”
>
> **News.am** / *Այսօր մոդայիկ է դարաբաղցի, ապարանցի, քյավառցի լինելը, բայց ոչ երեւանցի. Երեւանի քաղաքապետի թեկնածու* / Հեղինակ. թեկնածու, ՕԵԿ, ապրիլ 26

Ակնհայտ է, որ ամբոխավարական այս հռետորաբանությունն ուղղված էր «բնիկ երևանցիների» քվեները գրավելուն, դիմելով օտարատյացության հավանական

զգացումներին, որոնք որոշ չափով գոյություն ունեն այն պատճառով, որ ՀՀ այլ տարածքներից զգալի թվով հայեր են ժամանում Երևան՝ աշխատանքի և ուսումնառության նպատակներով:

Թեև թեկնածուն որոշակի աջակցություն ձեռք բերեց ընտրողների շրջանում, սակայն նրա դեմագոգիան նաև քննադատության ենթարկվեց հանրության կողմից: Հանրությունը և այլ կուսակցությունների անդամները նրան մեղադրեցին անհանդուրժողական և անվայել վարքագիծ դրսևորելու մեջ:

> “...Արմեն Երիցյանը հանրության հետ հանդիպման ժամանակ հաճախ իրեն պահում է «քուչի ամենալավ տղու» պես: Հանրամատչելի խոսք ասվածը նա շփոթել է կիսագողական ժարգոնի հետ»:”
>
> **News.am** / *ՕԵԿ-ի թեկնածուն «քուչի ամենալավ տղու» վարք է դրսևորում* / Հեղինակ. լրագրող, ապրիլ 26

Արդար ընտրություններ

Ընտրարշավի ընթացքում բարձրաձայնվող քաղաքական արժեքները հաճախ վերաբերում էին հենց ընտրություններին: Քանի որ առավել քննարկվող հարցերից էին ընտրակեղծիքները, ընտրակաշառքը և ընտրողների վրա գործադրվող ճնշումները, բոլոր մասնակից կուսակցությունները կարևորում էին արդար ընտրությունների անցկացումը:

> “...մեզ համար հիմնական խնդիրը շարունակում է մնալ ընտրությունների լեգիտիմությունը”
>
> **News.am** / *Հայաստանի իշխանությունները պետք է գիտակցեն լեգիտիմ ընտրությունների անցկացման կարեւորությունը* / Հեղինակ. քաղաքական գործիչ, ՀՅԴ, ապրիլ 16

Նրանց կարծիքով սա վճռորոշ նշանակություն ուներ, որովհետև իշխանությունների նկատմամբ մարդկանց բացասական վերաբերմունքի պատճառը ընտրությունների արդարության հանդեպ ունեցած անվստահությունն է: Ամենատարբեր գործիչների կարծիքով, հանրության վերաբերմունքը իշխանությունների և նրանց իրականացրած գործունեության հանդեպ կբարելավվի

միայն այն դեպքում, երբ ընտրողները վստահ լինեն, որ իրենց ձայնը լսվել է և քվեները պատշաճ ու արդարացի կերպով են հաշվարկվել:

ԶԼՄ-ները

Զեկույցի այս բաժնում կամփոփենք ԶԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանման վերաբերյալ այն տեղեկատվությունը, որը մենք ձեռք ենք բերել մշտադիտարկման գործընթացի ժամանակ: Թերևս, լուսաբանման ուժեղ և թույլ կողմերը ներհատուկ չեն զուտ այս ընտրարշավին. ավելի ճիշտ, դրանք բխում են ընդհանուր նվաճումներից և հիմնախնդիրներից, որոնք բնորոշ են հայաստանյան ԶԼՄ-ներին՝ դրանց զարգացման ներկա փուլում: Սույն զեկույցի նպատակներից ելնելով, մենք կենտրոնացել ենք այն հարցերի վրա, որոնք՝ (1) դրսևորվել են մշտադիտարկման միջոցով ձեռք բերված օրինակներում, (2) վերաբերում են ընտրարշավի լուսաբանմանը և ազդում են իրազեկ ընտրություն կատարելու համար ընտրողներին անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության վրա:

Թեև սույն ուսումնասիրության նպատակը չէր չափել լուսաբանման արդարացիության և հավասարակշռվածության աստիճանը, մանավանդ՝ քանի որ սա որակական ուսումնասիրություն է, ուստի մենք չունենք կողմնակալությունը կամ հավասարակշռվածությունը չափող գործիքները: Այսուհանդերձ, հիմնվելով տվյալների բազայի բովանդակության վրա, կարելի է նշել, որ ***ընտրարշավի շրջանակում տեղի ունեցած իրադարձությունների և աշխատանքների լուսաբանումը լայնընդգրկուն էր, մանրակրկիտ և վերաբերում էր ընտրությունների գործընթացում ներգրավված բոլոր խաղորդներին:*** Նույնիսկ ակնհայտ ետնապահի՝ Առաքելություն կուսակցության կողմից կազմակերպված այնպիսի աննշան իրադարձությունը, ինչպիսին է մի քանի տասնյակ ընտրողների հետ հանդիպումը, լուսաբանվել են ընտրանքում եղած բոլոր ԶԼՄ-ների կամ դրանց մեծ մասի կողմից: Ընդհանուր առմամբ, կուսակցությունների ընտրարշավային միջոցառումների մեծ մասը լուսաբանվել է մեր ընտրանքում եղած բոլոր հինգ ԶԼՄ-ների կողմից, ընդ որում, բացառությամբ ընդդիմադիր կուսակցությունների համեմատ իշխող կուսակցության հասցեին հնչեցված ավելի մեծ քննադատության, լրատվամիջոցներից ոչ մեկի կողմից այլ տեսանելի աչառու վերաբերմունք չի նկատվել:

Սակայն ընտրությունների հանդեպ եղած ուշադրությունը ինքնին չի կարող ապահովել ընտրարշավի պատշաճ լուսաբանում: Յուրաքանչյուր իրադարձության

մասին հաղորդելը բավարար չէ, և, թերևս՝ ոչ միշտ է անհրաժեշտ կամ առնվազն երկրորդական նշանակություն ունի՝ համեմատած ընտրարշավի բովանդակությունն արտացոլելու կարևորության հետ: Մինչդեռ, ուսումնասիրությանը մասնակցած բոլոր վերլուծաբանների կողմից արված առանցքային դիտարկումներից մեկը վերաբերում էր ընտրարշավի ***բովանդակության լուսաբանման՝*** ընդհանուր առմամբ ***մակերեսային բնույթին***: Խոսքը վերաբերում է կուսակցությունների ծրագրային դրույթներին, քաղաքականության կոնկրետ ոլորտների շուրջ մրցակիցների արած հայտարարություններին և տված խոստումներին: Թեև մեր ընտրանքում եղած ԶԼՄ-ները բծախնդիր կերպով հետևել են բոլոր կուսակցությունների ընտրարշավների ժամանակ տեղի ունեցող յուրաքանչյուր իրադարձությանը, սակայն ընտրարշավի բուն բովանդակության հանդեպ ակնհայտ հետաքրքրություն չեն ցուցաբերել: ԶԼՄ-ներով հրապարակված նյութերը ամենայն մանրամասնությամբ նկարագրում են ընտրություններին մասնակցող կուսակցությունների առաջնորդների և անդամների տված մամուլի ասուլիսները, ընտրողների հետ հանդիպումները, երթերը, հանրահավաքները, համերգները և ընտրարշավի այլ միջոցառումներ:

Միջոցառումներով պայմանավորված լուսաբանումն ակնհայտ էր մեր ընտրանքում եղած բոլոր հինգ ԶԼՄ-ների առումով: Այս թերությունն անշուշտ չի կարելի վերագրել զուտ ԶԼՄ-ներին. հաղորդվում էր, որ իրենք՝ քաղաքական գործիչներն էլ մեծ մասամբ դեմ էին բանավեճերին մասնակցելուն և նախընտրում էին ելույթ ունենալ միայնակ կամ լրագրողի հետ դեմ առ դեմ: Ելույթների ժամանակ նրանք նախընտրում էին խոսել իրենց կուսակցության ուժեղ կողմերի, անդամների միաբանության և ընտրություններում հաղթելու՝ կուսակցության մեծ հնարավորությունների մասին, միևնույն ժամանակ շեշտադրելով իրենց մրցակիցների թույլ կողմերն ու ցածր բարոյական նկարագիրը: Կուսակցությունների անունից հանդես եկող անձինք շատ քիչ էին խոսում բովանդակային կողմի մասին, այսինքն՝ զանազան ոլորտներում առկա հարցերի և քաղաքականությունների մասին, ինչպես օրինակ՝ քաղաքաշինության, թափոնների կառավարման, տրանսպորտի, հանգստի կազմակերպման, քրեական իրավիճակի, զբաղվածության, բնապահպանական և առողջապահական վտանգների և այլն:

Սակայն, թեև քաղաքական գործիչները հազվադեպ էին խորիմաստ ասելիք ունենում, լրագրողներն էլ իրենց հերթին առանձնապես ջանք չէին թափում բովանդակային նյութ հայթայթելու համար: Մեր մշտադիտարկած լրատվամիջոցների պարագայում հարցազրուցավարները և լրահաղորդները քաղաքական գործիչներին դժվար հարցեր չէին տալիս: Նրանք քաղաքական գործիչների արտահայտած մտքերը կասկածի չէին ենթարկում, հարցականի տակ չէին դնում կամ չէին վերլուծում կամ

համեմատում նույն կամ այլ գործիչների կողմից նախկինում արված այլ հայտարարությունների հետ: Նրանք բավականին պասիվ էին կամ առնվազն նախահարձակ չէին մամուլի ասուլիսների կամ հարցազրույցների ժամանակ արված հայտարարությունները խորությամբ հաղորդելու հարցում: Որպես արդյունք, ընտրարշավի ընդհանուր լուսաբանումը խորությամբ տեղի չունեցավ: Ինչպես կարելի է տեսնել նախորդ բաժիններում, քաղաքական գործիչները հեշտությամբ ճողոպրում էին այնպիսի լղոզված կարգախոսներով, ինչպիսիք էին «համամասնական զարգացումը» և «ենթակառուցվածքների բարելավումը»՝ առանց կոնրետացնելու, թե ինչ է արվելու և ինչի հաշվին:

Հաշվի առնելով այն միջավայրի մասին մեր իմացությունը, որում հայաստանցի լրագրողներն ու ԶԼՄ-ները գործում են, խորը լուսաբանման ոչ բավարար լինելը բացատրվում է առնվազն մի քանի հնարավոր պատճառներով:

Առաջին պատճառն այն է, որ ԶԼՄ-ների մեծամասնությունը, բացառությամբ մի քանի հետաքննող կամ քաղաքացիական կողմնորոշում ունեցող ԶԼՄ-ների (որոնք ընտրանքի մեջ չներառվեցին ընթերցողների համեմատաբար փոքր թվաքանակի պատճառով), ***լրագրողներին վճարում է նորությունների քանակի հիման վրա***. սա նշանակում է, որ նրանք օրական պետք է թողարկեն որոշակի քանակությամբ հոդվածներ, որպեսզի եկամուտ ստանան: Սա նրանց հնարավորություն չի տալիս բավականաչափ ժամանակ ունենալ կամ որոշակիորեն շահագրգռված լինել խորը վերլուծություններ անելու:

Երկրորդ պատճառն այն է, որ հայ ***հասարակությունը տեղյակ չէ*** ընտրարշավի բովանդակության կարևորության մասին: Ընթերցողները և հեռուստադիտողները խորը հաղորդումներ չեն պահանջում կամ ակնկալում, որոնք կբացահայտեին ընտրական գործընթացի շահագրգիռ կողմերի քաղաքականության ռազմավարությունը:

Երրորդ պատճառն այն է, որ, հաշվի առնելով ինքնագրաքննության հանդեպ եղած ճնշումը և ընտրությունների կողմնակալ լուսաբանումը, Հայաստանի ԶԼՄ–ները ընտրությունների ժամանակ կողմնակալ պահվածքի համար ենթարկվում են թե հայաստանյան և թե միջազգային մանրակրկիտ դիտարկման: ԶԼՄ-ների կողմից լուսաբանումը մշտադիտարկվում է քանակական մեթոդների օգնությամբ, որի նպատակն է համոզվել, թե արդյոք բոլոր խաղորդներին տրվում է եթերային նույն ժամանակը, լրագրային տարածքը և այլն, և թե արդյոք գործ ունենք մեկ կամ մի քանի խողորդների օգտին կողմնակալ լուսաբանման իրողության հետ: Ձավեշտականն այն

է, որ սա հանգեցնում է մի իրավիճակի, որ քաղաքական գործչին դժվար հարց տալուց կամ նրա արած արտահայտությունների միջև եղած անհետևողականությունը մատնանշելուց առաջ լրագրողը երկմտում է, որովհետև արդյունքների մշտադիտարկման ժամանակ դա կարող է համարվել «բացասական լուսաբանում» և կարող է խնդիրներ առաջացնել տվյալ լրատվամիջոցի համար, որը կարող է ***մեղադրվել անհավասարակշիռ կամ կողմնակալ լուսաբանման համար:*** Այս հիմնախնդիրը կապված է ոչ միայն ԶԼՄ-ների մշտադիտարկման քանակական մեթոդաբանության հետ (որը ժամանակի ընթացքում աստիճանաբար բարելավվում է՝ խնդրի վերաբերյալ վերլուծաբանների տեղեկացվածությանը զուգահեռ), այլ նաև հայաստանյան լրատվական միջոցներում տիրող ընդհանուր մթնոլորտի հետ, այսինքն՝ ազատ խոսքի, բաց քննադատության և հետևողական, խմբագրական բաց քաղաքականության բացակայության հետ:

Ի վերջո, խորը լրատվությունն իր բնույթով կարող է ռիսկեր պարունակել, քանի որ այն միանշանակորեն – թե հասուն ժողովրդավարության երկրներում և թե զարգացող երկրներում – վերաբերում է այնպիսի նյութերի, որոնց հրապարակումը ինչ-որ մեկի համար անցանկալի է: Ռիսկի դիմելը մի հասկացություն է, որին հայ իրականության մեջ հիմնական լրատվամիջոցները սովորաբար չեն դիմում. մասամբ այն պատճառով, որ Հայաստանում լրագրողների նկատմամբ արձանագրվող բռնությունները նվազում են, թեև չեն հասել զրոյական մակարդակի, մասամբ էլ՝ հասարակության կողմից ցածր պահանջարկի պատճառով (հետաքննողական լրահաղորդություն իրականացնող փոքրաթիվ լրատվամիջոցները բարձր վարկանիշ չեն վայելում), իսկ մասամբ էլ՝ հայաստանցի միջին լրագրողի պատասխանատվության և նվիրվածության պակասի պատճառով, որը գալիս է ավանդույթի բացակայությունից:

Մշտադիտարկման արդյունքների հիման վրա կարելի է նշել ԶԼՄ-ների կողմից Երևանի քաղաքապետի և ավագանու ընտրության լուսաբանման ևս երկու ասպեկտ, ընդ որում՝ մեկը դրական, իսկ մյուսը՝ մտահոգության տեղիք տվող:

Առաջինը՝ դրականը, այն էր, որ մեր ընտրանքում եղած ԶԼՄ-ները ընդհանուր առմամբ ***քննադատաբար էին տրամադրված էթիկայի սահմանն անցնող, պոպուլիստական ընտրարշավի նկատմամբ,*** այն է՝ Օրինաց երկրի կողմից անցկացված ընտրարշավի տեսակի նկատմամբ: Տարբեր ԶԼՄ-ների լրագրողները մատնանշում էին «ոչ երևանցիների» նկատմամբ ատելության սերմանման՝ արմատավորված բնույթը և քննադատում այս ոգով հայտարարություններ անողներին: Այս բավականին ընդհանրական վերաբերմունքը ցույց է տալիս ԶԼՄ-

ների աճող պատասխանատվությունը և նրանց աշխատանքում բարոյական չափորոշիչների առկայությունը:

Երկրորդ ասպեկտը՝ անհանգստացնողը, այն էր, որ թեև բոլոր ԶԼՄ-ները ինչ-որ պահի հնարավոր ընտրակաշառքները նշում էին որպես արդար ընտրությունների հետ կապված առանցքային մտահոգություն և ընդհանրական հայտարարություններ էին անում այդ ոգով այն մասին, որ ձայները «գնելու են» որոշ շահագրգիռ կողմեր, այնուամենայնիվ, գոնե մեր ընտրանքում, ***ընտրակաշառք առաջարկելու կամ տալու կոնկրետ դեպքի վերաբերյալ կոնկրետ հայտարարություն չի եղել***: Այս խնդիրը կապված է առհասարակ խորը լրատվության բացակայության և ռիսկի չդիմելու ցանկության հետ: Այն նաև կապված է քաղաքական շահագրգիռ կողմերից ընտրողների վախի, ուստի և՝ կաշառք վերցնելու մասին լրագրողների հետ զրուցելու ցանկություն չունենալու հետ:

Նախորդ ուսումնասիրությունների մեր փորձը ցույց է տալիս, որ Հայաստանում տեղի ունեցող ընտրությունների մասին խոսելիս ԶԼՄ-ները, փորձագետները և քաղաքացիները աշխույժ բանավեճերի մեջ են մտնում կոռուպցիայի դեպքերի և ընտրողների նկատմամբ եղած ճնշումների վերաբերյալ, որոնք մշտապես ազդում են յուրաքանչյուր ընտրության ելքի վրա: Մշտադիտարկումը սկսելիս հետազոտական խումբը նախատեսում էր դիտարկել այդ մասին ԶԼՄ-ներում հրապարակված նյութերի զգալի ծավալ: Ինչպես և սպասվում էր, այդ թեմայով բավականին շատ նյութեր կային: Սակայն նշված չէին այդ նյութերում եղած տեղեկությունների աղբյուրները կամ հղումները: լավագույն դեպքում լրագրողները նշում էին կոռուպցիայի հնարավորություն մասին և բարձրաձայնում որոշակի թվեր կամ տոկոսներ: Սակայն այդ թվերի սկզբնաղբուրի վերաբերյալ որևիցե կոնկրետ տեղեկություն չէր նշվում: Սա ակնհայտորեն ցույց է տալիս, որ ընտրարշավը լուսաբանելիս լրագրողները որևիցե խորը լրագրողական աշխատանք չեն կատարել և չեն փորձել այս ցավոտ հարցերի վերաբերյալ անցկացնել արժեքավոր հետաքննություն:

Ստորև բերված մեջբերման հեղինակը ՀՀԿ ներկայացուցչին մեղադրում է ընտրություններում իր կուսակցության հաղթանակը ապահովելու համար իր անձնական կապերն ու կուսակցության ռեսուրսներն օգտագործելու մեջ:

«…Սամվել Ալեքսանյանը իրականացվող «թաղեթաղ» ակցիայի ընթացքում կանչում է թաղի «նայողների», հանձնարարում, որ իրենք էլ «կուրացիա» անեն բակերի «նայողներին», բակերի «նայողները»՝ բազմաբնակարան շենքերի «նայողներին», ձայների պլան դնում ու ասում. «Ստանամ: Ոնց ուզում եք՝ ապահովեք»:

Slaq.am / Թեժ քարոզարշավ ՀՀԿ-ական թիմի «կուրատորի» և ԲՀԿ-ական թիմերի /Հեղինակ.լրագրող, ապրիլ 26

Սակայն թե որտեղից են այդ տեղեկությունները ստացվել, Երևանի որ թաղամասի մասին է խոսքը և բազմաթիվ այլ հարցեր մնում են անպատասխան:

Առաջարկություններ

Սույն զեկույցի առաջարկությունները հասցեագրված են երկու տիպի խաղորդների՝ քաղաքական կուսակցություններին և լրատվական միջոցներին: Առաջարկությունները բերված են ստորև, համապատասխան բաժիններում: Ընդհանուր առմամբ, դրանք հիմնված են այն ենթադրության վրա, որ ԶԼՄ-ներն ի վերջո այն տեղն են, որտեղ ընտրողները ամենից շատ տեղեկություններ են ստանում ընտրություններին մասնակցող խողորդների մասին: ՈՒստի ԶԼՄ-ների կողմից լուսաբանման որակը առհասարակ քարոզարշավի որակի էական բաղադրիչ մաս է կազմում, որովհետև ԶԼՄ-ներում քարոզարշավի համարժեք ներկայացվածությունը ընտրողների իրազեկ ընտրության համար առանցքային նախապայման է: Ընտրությունների ժամանակ խաղորդների վերաբերյալ տեղեկատվության ազատ հոսքն ապահովելու և գիտակից, սոցիալապես պատասխանատու քվեարկության հարցում առաջընթաց գրանցելու նպատակով պետք է նախապայմաններ ստեղծել հետևյալի համար.

- նախ, գաղափարախոսական տեսակետից հուսալի և հետևողական, տեխնիկապես լավ կազմակերպված, պատասխանատու և բարոյական ***քարոզարշավ կուսակցությունների կողմից,***
- երկրորդ, ընտրարշավի մասնագիտական, անկողմնակալ և խորը ***լուսաբանում լրատվամիջոցների կողմից,***
- երրորդ, ***կուսակցությունների և ԶԼՄ-ների՝*** միմյանց հետ ***համագործակցելու*** կարողություն՝ հանուն իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու և ընտրողների համար տեղեկատվության մատչելիությունն ապահովելու: Այս կետն այնքան ինքնա-ակնհայտ չէ, որքան կարող է թվալ, որովհետև այն երկու տիպի շահագրգիռ կողմերի համար էլ պահանջում է մասնագիտական չափորոշիչներ:

Թեև ժողովրդավարական ընտրարշավի և նույնպիսի ընտրությունների անցկացման համար համարժեք իրավական և վարչական միջավայր է անհրաժեշտ, բայց նաև անհրաժեշտ է, որ շահագրգիռ բոլոր կողմերը իրազեկ լինեն իրենց պարտականությունների մասին և դրանք պատշաճ կերպով կատարեն: Հայաստանի նման երկրում, որտեղ օրենքները շարունակում են մնալ անկատար, գործելակերպը հաճախ հետ է մնում իրավական չափորոշիչներից, իսկ վարչական ռոսուրսներն էլ օգտագործվում են գործող իշխանության հաղթանակն ապահովելու և ոչ թե արդար ընտրական գործընթացի համար, քաղաքական գործիչները և լրագրողները հակված

են սեփական անարդյունավետությունը, անբարոյականությունը կամ ծուլությունը վերագրել քաղաքականության առումով թույլ միջավայրին: Սակայն նույնիսկ սահմանափակ ժամանակ և ընդգրկում ունեցող ուսումնասիրությունը, ինչպիսին ներկա ուսումնասիրությունն է, ցույց է տալիս, որ որոշ խաղորդներ ավելի լավ են աշխատում, քան մյուսները և որ միջավայրը չի արդարացնում ատելություն սերմանելու կամ ստանձնած պարտավորությունը չկատարելու իրողությունը: Սույն ուսումնասիրության առաջարկությունները հիմնված են վերոնկարագրյալ հանձնառությունների և մշտադիտարկման միջոցով ձեռք բերված և տվյալների մեր բազայում զետեղված տվյալների վրա:

Առաջարկություններ քաղաքական կուսակցություններին

Ելնելով այս ընտրարշավի մշտադիտարկումից, մենք կարող ենք հետևյալ առաջարկություններն անել, որոնք վերաբերում են Հայաստանի քաղաքական կուսակցությունների գործունեությանը ոչ միայն ընտրարշավի ընթացքում, այլև ընտրությունների միջև ընկած ժամանակաշրջանում:

1. Մշակեք գաղափարախոսություն կամ գոնե ճանապարհային քարտեզ քաղաքականության վերաբերյալ: Գաղափարախոսության բացակայության պայմաններում քաղաքականությունը մեծապես անձնավորվում է, և կուսակցությունները դառնում են վաղանցիկ կազմակերպություններ: Ամուր գաղափարախոսական հենք ունենալը կուսակցություններին հնարավորություն կտա դառնալ ինքնահարատ, ունենալ հետևողական ընտրազանգված և ճանաչելի հանրային իմիջ:
2. Բաց եղեք շահագրգիռ տարբեր կողմերի հետ բանավեճերի համար, այդ թվում՝ ձեր հակառակորդների հետ: Հուսալի գաղափարախոսության վրա հիմնվելու դեպքում ձեր քաղաքականության դրույթները կլինեն ապացուցելիորեն փաստարկված: Ցուցաբերեք բաց և պատրաստակամ մոտեցում ձեր քաղաքականությունը քննարկելու առումով:
3. Ապահովեք, որ ձեր խոսնակները տիրապետեն այն թեմաներին, որոնց մասին խոսում են և ունենան բանավիճելու հմտություններ: Վարձեք պրոֆեսիոնալների:
4. Հանրությանը խոստումներ տալիս եղեք կոնկրետ: Այնպիսի խոստումներ և պլաններ առաջադրեք, որոնք ենթակա լինեն մշտադիտարկման և գնահատման: Խոսեք կոնկրետ ժամկետների մասին, մարդկանց ներքաշեք շոշափելի նախաձեռնությունների մեջ:
5. Սահմանեք ձեր բարոյական չափորոշիչը և հավատարիմ մնացեք դրան: Մի դիմեք այնպիսի ցածրակարգ բնազդների, ինչպիսիք են շովինիզմը և ռեգիոնալիզմը, իսկ այդպես վարվողներին էլ քննադատեք, որպեսզի նախանշված չափորոշիչը մնա իր բարձրության վրա: Արգելք հանդիսացեք խտրականությանն ու անհանդուրժողականությանը:

Առաջարկություններ ԶԼՄ-ներին

Ճիշտ ինչպես քաղաքական կուսակցությունների դեպքում, մեր առաջարկությունները վրաբերում են հայաստանյան ԶԼՄ-ների աշխատանքին ընտրությունների ընթացքում, բայց ոչ միայն այդ ժամանակ: Քաղաքական գործունեության, ընտրական գործընթացների, օրենսդիր աշխատանքի և օրենքների կիրառման հարցերի լուսաբանումը ԶԼՄ-ներով ազդում է Հայաստանի քաղաքականության վրա ամբողջ տարվա ընթացքում: Ընտրությունների ընթացքում և դրանից դուրս ԶԼՄ-ների դերը շարունակում է խիստ կարևորվել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ընտրողների տեղեկացվածության և պատասխանատվության բարձրացումը և քաղաքականության հարցերի և գործընթացի մասին բանավեճերի անցկացումը:

1. Հետևելով Բի-Բի-Սի-ի և այլ խոշոր լրատվամիջոցների օրինակին, մշակեք յուրաքանչյուր կոնրետ ընտրությունը լուսաբանելու խմբագրական քաղաքականություն: Որոշեք, թե տվյալ ընտրության ժամանակ որ հարցերն են առաջնահերթ և անպայման լուսաբանեք դրանք՝ բոլոր մրցակիցներից փորձելով ստանալ այդ հարցերի պատասխանը:
2. Կենտրոնացեք թե քարոզարշավի բովանդակության և թե դրա շրջանակում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Կարդացեք կուսակցությունների ծրագրահենքերը: Վերլուծեք և համեմատեք քաղաքական գործիչների արած հայտարարությունները: Ընտրողների մեջ սերմանեք ընտրարշավի բովանդակության և քաղաքական գործիչների տված խոստումների շուրջ մտածելու սովորություն:
3. Հարցականի տակ դրեք քաղաքական գործիչների ասածները. Դրանք հալած յուղի տեղ մի ընդունեք: Հարցրեք, թե որտեղից են իրենք մտադիր ճարել այն միջոցները, որոնք անհրաժեշտ են իրենց խոստումները կատարելու համար, ով է լինելու հավակնոտ ծրագրերի իրականացման պատասխանատուն և հանրությունն ինչպես կարող է մշտադիտարկել իրենց կողմից հանրային ֆոնդերի ծախսման գործընթացը:
4. Փորձեք կողմերին ներքաշել բանավեճի մեջ: Բանավեճեր կազմակերպեք հնարավոր որևէ ձևաչափով՝ դեմ առ դեմ, լրագրողների և փորձագետների հետ և այլն:
5. Մի կենտրոնացեք բամբասանքների և ընտրարշավի ժամանակ տեղի ունեցող աննշան իրադարձությունների վրա, հատկապես երբ դրանք վերաբերում են ընտրարշավի ետնապահներին, ովքեր հայտնվել են սկանդալային իրավիճակների մեջ: Ընտրողների մեջ սերմանեք քաղաքականության մասին

մտածելու սովորություն՝ կենտրոնանալով քաղաքականությունների և տեխնոլոգիաների վրա և ոչ թե անհատների ու փոխընդհարումների վրա:

6. Համապատասխան ֆինանսավորման և ժամանակի առկայության դեպքում խորացեք թեմաների մեջ: Ֆոնդեր առանձնացրեք ընտրությունների ժամանակ առնվազն մի քանի լրագրողական հետաքննություն իրականացնելու համար: Գործակցեք այլ ԶԼՄ-ների հետ՝ կարևոր այնպիսի հարցերի վերաբերյալ համատեղ հետաքննություն կազմակերպելու նպատակով, ինչպիսիք են կազմակերպված քվեարկությունը կամ ընտրողների նկատմամբ կիրառվող ճնշումները:
7. Մատնանշեք էթիկայի սահմաններից դուրս եկող վարքագիծը կամ պոպուլիզմի դեպքերը: Ընտրողներին օգնեք հասկանալ, թե երբ են իրենց փորձում մանիպուլյացիայի ենթարկել: